ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՁԵՌՆՈՂ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԿ

ԵՐԵՎԱՆԻ ԴԱՎԹԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ՖՈՒՏԲՈԼԻ ԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(ԼՐԱՄՇԱԿՎԱԾ)

Կատարող՝

«Թրիգգեր» ՍՊԸ տնօրեն

Ա. Պեպանյան

ԵՐԵՎԱՆ – 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 2

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 4

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ և ՏԵՐՄԻՆՆԵՐ 5

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 10

ՈԼՈՐՏԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԸ 11

ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 20

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ 41

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 64

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ 74

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՊԼԱՆ 79

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 84

Հավելված 1. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական 85

Հավելված 2. Ճարտարապետահատակագծային առաջադրանք 86

Հավելված 3. Ջրամատակարարման և ջրահեռացման տեխնիկական պայման 87

Հավելված 4. Հանրային քննարկման արձանագրություն, մասնակիցների ցանկ և նկարներ 88

Հավելված 5. Ավագանու՝ գործունեությանը նախնական համաձայնություն տալու մասին որոշման պատճեն 92

Հավելված 6. Իրաղրային հատակագիծ 93

Հավելված 7. Շինարարական աշխատանքների ժամանակացույցը 94

Հավելված 8. Հանրային քննարկման թերթի հայտարարությունը 95

Հավելված 9. Շինարարական աշխատանքների կազմակերպման հատակագիծ.....96

Հավելված 10. Բարեկարգման և կանաչապատման հատակագիծ 97

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագիր	Երևանի Դավթաշեն վարչական շրջանում ֆուտբոլի դպրոցի կառուցում
Ձեռնարկող	«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն
Ձեռնարկողի հասցե	ՀՀ, ք. Երևան, Խանջյան փ. / շ / 27
Նախագծային կազմակերպություն	«Ստուդիո 23» ՍՊԸ ՀՀ ք. Երևան, Ամիրյան 21/4 Հեռ. +374 41 23 00 23 Էլ.հասե՝ info@studio23.am
ՇՄԱԳ Հաշվետվությունը մշակող	«Թրիգգեր» ՍՊԸ, հեռ.՝+374 94 40 47 34 էլ. հասցե՝ triggermonitoring@gmail.com
Կառուցապատվող տարածքի գտնվելու վայրը	Ք. Երևան, Դավթաշեն վ/շ, Ա. Միկոյան փողոց հ. 111/7
Կառուցապատվող տարածքի մակերեսը	5,225888 հա
Կառուցապատման մակերեսը	11460 քմ

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ և ՏԵՐՄԻՆՆԵՐ

Ներկայացվող սահմանումները և եզրույթները /տերմիններ/ բերվում են ՀՀ բնապահպանական ոլորտի օրենքներից և նորմատիվ փաստաթղթերից:

Շրջակա միջավայր՝ բնական և մարդածին տարրերի (մթնոլորտային օդ, ջրեր, հողեր, ընդերք, լանդշաֆտ, կենդանական ու բուսական աշխարհ, ներառյալ՝ անտառ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, բնակավայրերի կանաչ տարածքներ, կառույցներ, պատմության և մշակույթի հուշարձաններ) և սոցիալական միջավայրի (մարդու առողջության և անվտանգության), գործոնների, նյութերի, երևույթների ու գործընթացների ամբողջությունը և դրանց փոխազդեցությունը միմյանց ու մարդկանց միջև.

Շրջակա միջավայրի վրա ազդեցություն՝ հիմնադրութային փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա հնարավոր փոփոխությունները.

Նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում.

Ձեռնարկող՝ սույն օրենքի համաձայն՝ փորձաքննության ենթակա հիմնադրութային փաստաթուղթ մշակող, ընդունող, իրականացնող և (կամ) գործունեություն իրականացնող կամ պատվիրող պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմին, իրավաբանական կամ ֆիզիկական անձ.

Ազդակիր համայնք՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրութային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք.

Շահագրգիռ հանրություն՝ փորձաքննության ենթակա հիմնադրութային փաստաթղթի ընդունման և (կամ) նախատեսվող գործունեության իրականացման

առնչությամբ հետաքրքրություն ցուցաբերող իրավաբանական և ֆիզիկական անձինք.

Գործընթացի մասնակիցներ՝ պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններ, ֆիզիկական ու իրավաբանական անձինք, ներառյալ՝ ազդակիր համայնք, շահագրգիռ հանրություն, որոնք, սույն օրենքի համաձայն, մասնակցում են գնահատումների և (կամ) փորձաքննության գործընթացին.

Հայտ՝ ձեռնարկողի կամ նրա պատվերով կազմած հիմնադրութային փաստաթղթի մշակման և (կամ) նախատեսվող գործունեության նախաձեռնության մասին ծանուցման փաթեթ.

Բնության հատուկ պահպանվող տարածք՝ ցամաքի (ներառյալ՝ մակերևութային ու ստորերկրյա ջրերը և ընդերքը) և համապատասխան օդային ավազանի՝ սույն օրենքով գիտական, կրթական, առողջարարական, պատմամշակութային, ռեկրեացիոն, զբոսաշրջության, գեղագիտական արժեք են ներկայացնում, և որոնց համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ.

Ազգային պարկ՝ բնապահպանական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, ռեկրեացիոն արժեքներ ներկայացնող միջազգային և (կամ) հանրապետական նշանակություն ունեցող տարածք, որը բնական լանդշաֆտների ու մշակութային արժեքների զուգորդման շնորհիվ կարող է օգտագործվել գիտական, կրթական, ռեկրեացիոն, մշակութային և տնտեսական նպատակներով, և որի համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ.

Ազգային պարկի արգելոցային գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ գործում է պետական արգելոցի համար սույն օրենքով սահմանված ռեժիմը.

Ազգային պարկի արգելավայրային գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ գործում է պետական արգելավայրի համար սույն օրենքով սահմանված ռեժիմը.

Ազգային պարկի ռեկրեացիոն գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ թույլատրվում է քաղաքացիների հանգստի և

զբոսաշրջության ու դրա հետ կապված սպասարկման ծառայության կազմակերպում

Ազգային պարկի տնտեսական գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ թույլատրվում է ազգային պարկի ռեժիմին համապատասխանող տնտեսական գործունեություն.

Պետական արգելավայր՝ գիտական, կրթական, պատմամշակութային, տնտեսական արժեք ներկայացնող տարածք, որտեղ ապահովվում են էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների պահպանությունը և բնական վերարտադրությունը.

Պետական արգելոց՝ գիտական, կրթական, պատմամշակութային արժեք ներկայացնող առանձնահատուկ բնապահպանական, գեղագիտական հատկանիշներով օժտված միջազգային և (կամ) հանրապետական նշանակություն ունեցող տարածք, որտեղ բնական միջավայրի զարգացման գործընթացներն ընթանում են առանց մարդու անմիջական միջամտության.

Բնության հատուկ պահպանվող տարածքի պահպանման գոտի՝ տարածք, որի ստեղծման նպատակն է սահմանափակել (մեղմացնել) բացասական մարդածին ներգործությունը բնության հատուկ պահպանվող տարածքների էկոհամակարգերի, կենդանական ու բուսական աշխարհի ներկայացուցիչների, գիտական կամ պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտների վրա.

Լանդշաֆտ՝ աշխարհագրական թաղանթի համասեռ տեղամաս, որը հարևան տարածքներից տարբերվում է երկրաբանական կառուցվածքի, ռելիեֆի, կլիմայի, հողաբուսական ծածկույթի և կենդանական աշխարհի ամբողջությամբ.

Հող՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ.

Հողային պրոֆիլ՝ հողագոյացման գործընթացում օրինաչափորեն փոփոխվող և գենետիկորեն կապակցված հողային հորիզոնների ամբողջություն.

Խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր

Հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով.

Հողի պոտենցիալ բերրի շերտ՝ հողային պրոֆիլի ստորին մասը, որն իր հատկություններով համընկնում է պոտենցիալ բերրի ապարների (բուսականության աճի համար սահմանափակ բարենպաստ քիմիական կամ ֆիզիկական հատկություններ ունեցող լեռնային ապարներ) հատկություններին.

Հողածածկույթ՝ երկրի կամ դրա ցանկացած տարածքի մակերևույթը ծածկող հողերի ամբողջությունն է.

Հողի բերրի շերտի հանման նորմեր՝ հողի հանվող բերրի շերտի խորությունը (սմ), ծավալը (մ^3), զանգվածը (տ).

Ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական.

Կենսաբանական բազմազանություն՝ ցամաքային, օդային և ջրային էկոհամակարգերի բաղադրիչներ համարվող կենդանի օրգանիզմների տարատեսակություն, որը ներառում է բազմազանությունը տեսակի շրջանակներում, տեսակների միջև և էկոհամակարգերի բազմազանությունը.

Բնապահպանական կառավարման պլան՝ գործունեության հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում.

Բնության հուշարձան, բնության հատուկ պահպանվող տարածքի կարգավիճակ ունեցող գիտական, պատմամշակութային և գեղագիտական

հատուկ արժեք ներկայացնող երկրաբանական, ջրաերկրաբանական, ջրագրական, բնապատմական, կենսաբանական բնական օբյեկտ.

Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 2014թ. հունիսի 21-ի ՀՕ 110-Ն (փոփոխությունները 2023թ. մայիսի 3) 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-ի «ա» ենթակետի համաձայն, նախատեսվող գործունեության նախագծային փաստաթղթերը ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման սույն հաշվետվությունը կազմվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության որոշումների պահանջներին համապատասխան:

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը:

Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը սահմանում է, որ «Պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը և այլն»:

Սկսած 1991թ. շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող ավելի քան 25 օրենսգրքեր և օրենքներ, բազմաթիվ ենթաօրենսդրական ակտեր և կանոնակարգեր են ընդունվել:

Ծրագրով իրականացվելիք աշխատանքների արդյունքում նախատեսվող շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակված

է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի հիման վրա:

Հաշվետվությունը ներառում է տվյալներ, հիմնավորումներ և հաշվարկներ, որոնք անհրաժեշտ են շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության ազդեցության փորձաքննության իրականացման համար:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (այսուհետ՝ ՇՄԱԳ) նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կանխատեսվող շրջակա միջավայրի վրա ազդեցությունը (շրջակա միջավայրը աղտոտող վնասակար նյութերը, թափոնները և այլ գործոններ), վերլուծել և գնահատել այն և ցույց տալ, որ նախատեսված են դրա կանխարգելմանը, չեզոքացմանը և կամ նվազեցմանը ուղղված անհրաժեշտ միջոցառումներ:

Սույն հաշվետվությունը կազմվել է Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանում նոր ֆուտբոլի դպրոցի կառուցման համար, որի նախագծային տեղակապման աշխատանքներն իրականացվել են «Ստուդիո 23» ՍՊԸ-ի կողմից: Նախագծի մշակման համար հիմք են հանդիսացել.

- Ինժեներաերկրաբանական հետազոտությունների արդյունքները,
- ՀՀ ում գործող օրենքներն ու նորմատիվատեխնիկական փաստաթղթերը,
- Պատվիրատուի առաջադրանքը՝ պայմանավորված համապատասխան հատակագծային ու ծավալատարածական լուծումներով:

ՈԼՈՐՏԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Հայաստանի Հանրապետության բնապահպանական օրենսդրական և կարգավորիչ շրջանակն ընդգրկում է ավելի քան 30 բնապահպանական օրենքներ: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերն ներկայացված են ստորև.

- ՀՀ Սահմանադրություն (2015) 10-րդ հոդվածը սահմանում է, որ ՀՀ ընդերքը և ջրային ռեսուրսներ հանդիսանում են պետության բացառիկ

սեփականությունը, իսկ հոդված 12-ը՝ պետության խթանիչ դերը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման և բնական պաշարների ողջամիտ օգտագործման գործընթացում՝ հաշվի առնելով կայուն զարգացման սկզբունքները և պատասխանատվությունն ապագա սերունդների առջև, ինչպես նաև յուրաքանչյուր ոքի պարտավորությունը շրջակա միջավայրի պահպանման գործընթացում:

- ՀՀ Օրենքը Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին, 2014թ. հունիսի 21-ի ՀՕ 110-Ն (փոփոխությունները 2023թ. մայիսի 3) - պահանջում է իրականացնել ծրագրերի դասակարգում ըստ կատեգորիաների՝ կախված գործունեության տեսակից և չափերից, իրականացնել ազդեցությունների գնահատում, և պետական փորձաքննության իրականացման արդյունքում ստանալ փորձագիտական եզրակացություն:
- «ՀՀ հողային օրենսգիրք» (2001) - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները:
- «ՀՀ Ջրային օրենսգիրք» (2002),
- «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենք,
- «ՀՀ Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենք (2006),
- «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008),
- ՀՀ Օրենքը Թափոնների մասին (2004) կարգավորում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքագրումը, տեղափոխումը, պահեստավորումը, վերամշակումը և տեղադրումը ՀՀ-ում:
- ՀՀ Օրենքը Մթնոլորտային Օդի Պահպանության մասին (ընդունված 1994թ. և լրամշակված 2022թ.) - կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը, մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝

մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

- ՀՀ Օրենքը Բնապահպանական Վերահսկողության մասին (2005) կարգավորում է ՀՀ-ում պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ;
- ՀՀ Օրենքը Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին (2000) կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման արարողակարգերը:
- ՀՀ Օրենքը Քաղաքաշինության մասին (1998) (Հոդվածներ 13, 14,15,16, Գլուխ 6) կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղեկատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը: Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառկումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):
- ՀՀ Օրենքը Պատմության և մշակութային անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին (1998թ.) սահմանում է իրավական և քաղաքական հիմքեր ՀՀ-ում մշակութային և պատմական հուշարձանների օգտագործման համար և կարգավորում է հարաբերությունները պահպանության և օգտագործման միջև: Այն նկարագրում է նոր հուշարձանի հայտնաբերման դեպքում կիրառվող ընթացակարգերը, սահմանում է հուշարձանների պետական գրանցման կանոնները, դրանց շուրջ պահպանման գոտու գնահատումը, և պատմամշակութային արգելավայրերի ստեղծումը:
- ՀՀ Օրենքը Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին (2006թ.) սահմանում է Հանրապետության համալիր կամ առանձին բնական

օբյեկտների, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների էկոհամակարգերի զարգացման, վերականգնման, պահպանման, վերարտադրության և օգտագործման իրավական հիմքերը և պետական քաղաքականության հարաբերությունները: Համաձայն օրենքի բնության հատուկ պահպանվող տարածքները ըստ նշանակության դասակարգվում են միջազգային, հանրապետական և տեղական կարևորության տարածքների, ըստ կատեգորիայի՝ պետական արգելոցի, ազգային պարկի, պետական արգելավայրի և բնության հուշարձանի:

- ՀՀ Օրենքը Բուսական աշխարհի մասին (1999թ.) սահմանում է ՀՀ պետական քաղաքականությունը բուսական աշխարհի պահպանման, պաշտպանության օգտագործման և վերարտադրության ոլորտներում: Օրենքը սահմանում է բուսական աշխարհի պետական գույքագրման և պետական մշտադիտարկման իրականացման նպատակները, բուսական աշխարհի Կարմիր գրքի կազմման պահանջները և մոտեցումները, բուսական աշխարհի օգտագործման պայմանները, օգտագործման իրավունքից զրկելու պայմանները, բուսական աշխարհի պահպանման դրույթները և տնտեսական գործիքները բուսական աշխարհի ռեսուրսների կայուն օգտագործման և մշտադիտարկման համար:
- ՀՀ Օրենքը Կենդանական աշխարհի մասին (2000թ.) սահմանում է ՀՀ պետական քաղաքականությունը կենդանական աշխարհի պահպանման, օգտագործման և վերարտադրության ոլորտներում: Օրենքը սահմանում է կենդանական աշխարհի ուսումնասիրությունների, պետական մշտադիտարկման, պետական գույքագրման նպատակները, կենդանական աշխարհի Կարմիր գրքի կազմման սկզբունքները, կենդանատեսակների օգտագործման պայմանները, օգտագործման իրավունքից զրկելու հիմքերը, կենդանիների պահպանման դրույթները, և կենդանական աշխարհի ռեսուրսների կայուն օգտագործման և մշտադիտարկման տնտեսական գործիքները:

- ՀՀ Օրենք Սեյսմիկ պաշտպանության մասին (12 հունիս, 2002 թ.) սահմանում է ՀՀ սեյսմիկ պաշտպանության բնագավառի կազմակերպման հիմնադրույթները և կարգավորում է դրա հետ կապված հարաբերությունները:
- ՀՀ Քաղաքաշինության մասին օրենք (05 մայիս, 1998 թ.) սահմանում է Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական գործունեության հիմնադրույթները և կարգավորում այդ գործունեության հետ կապված հարաբերությունները:
- ՀՀՇՆ 31-01-2014 «Բնակելի շենքեր. մաս I. Բազմաբնակարան բնակելի շենքեր» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին:
- ՀՀ Քաղաքաշինության նախարարի հրաման N 11- Ն «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում Շինարարական նորմերը հաստատելու մասին» (14 հունվար 2008) (Գլուխ IX):
- ՀՀ Քաղաքաշինության նախարարի հրաման N 44 Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ (28 ապրիլի 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:
- ՀՀ Կառավարության որոշում N 121-Ն «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» (2003) սահմանում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման պայմանները և կարգավորվում է դրա հետ կապված հարաբերությունները:
- ՀՀ Կառավարության որոշում N 108-Ն (2018 թ.) «Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N1318-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» սահմանվում է քաղաքային և գյուղական բնակավայրերի կանաչ գոտիների չափերը՝ ըստ բնակավայրի տարածքի, կանաչ գոտիների

տեսակները և կանաչապատման տարրերի տեսակային կազմը (տեսականին)՝ ըստ գոտիականության, ինչպես նաև կանաչ գոտիների անտառների պահպանությանն ու արդյունավետ օգտագործմանը ներկայացվող պահանջները:

- ՀՀ Կառավարության որոշում N 1059-Ա (սեպտեմբերի 25, 2014 թ.) «Բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և ռազմավարության բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» հաստատում է ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը՝ համաձայն հավելվածի 1-ի և Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության և օգտագործման բնագավառի 2014- 2020 թվականների պետական ծրագրի միջոցառումները՝ համաձայն N 2 հավելվածի:
- ՀՀ կառավարության N 1404-Ն որոշում 02.11.2017թ. «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 20.07.2006.N 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»:
- ՀՀ կառավարության N 781-Ն որոշում (31.07.2014թ.) «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին»:
- ՀՀ կառավարության N 1504-Ն որոշում 25.12.2014թ. «Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին»:
- ՀՀ կառավարության N 426-Ն որոշում 12.04.2018թ. «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին»:

- ՀՀ կառավարության որոշում N 967-Ն ՀՀ (14 օգոստոս, 2008 թ. «Բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին») հաստատում է ՀՀ-ում բնության հուշարձանների ցանկը՝ ըստ հավելվածի:
- ՀՀ կառավարության որոշում N 71-Ն «Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» (հունվարի 29, 2010 թ.) հաստատում է Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գիրքը՝ համաձայն հավելվածի:
- ՀՀ կառավարության որոշում N 72-Ն «Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին որոշումը» (հունվարի 29, 2010թ.) հաստատում է Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գիրքը՝ համաձայն հավելվածի:
- ՀՀ կառավարության որոշում N 596-Ն (19 մարտ, 2015թ.) ՀՀ-ում «Կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» սահմանում է կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը՝ համաձայն N1 հավելվածի:
- ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի հրաման N-1243-Ն (30 նոյեմբերի, 2015 թ.) «Սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ և կարևոր նշանակության օբյեկտները սահմանելու մասին», որը սահմանում է սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ և կարևոր նշանակության օբյեկտները՝ համաձայն հավելվածի:
- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրաման N 102-Ն (28 դեկտեմբեր, 2020թ.) ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարության նախագծման նորմեր» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի փետրվարի 3-ի N 24-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին»:
- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրաման N 49-Ն (24.03.2016): «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական դպրոցների

սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2030 թվականների ծրագրի շրջանակներում իրականացվող դպրոցական շենքերի ուժեղացման և նորի կառուցման համար Հայաստանի Հանրապետությունում գործող շինարարական նորմերով թույլատրելի առավել բարձր պահանջներ և պայմաններ կիրառելու մասին»:

- ՀՀ առողջապահության նախարարի հրաման N 12-Ն (28.03.2017) «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» N 2.2.4-016-17 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 11-ի N 82 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին»:
- ՀՀ առողջապահության նախարարի հրաման N15-Ն (19.09.2012) «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին»:
- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրաման N 103-Ա ՀՀՇՆ31-03.01-2014 «Հանրակրթական նշանակության շենքեր» շինարարական նորմերը հաստատելու մասին»:
- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրաման N 43-Ա (05.04.2018) «Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածուին հավանություն տալու մասին» (https://www.minurban.am/storage/Normative/43-A.pdf):
- ՀՀ կառավարության որոշում N 438-Ն (20 ապրիլի, 2002թ.) «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգ հաստատելու մասին» հաստատում է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը:

Ուղեցույցներ և ստանդարտներ

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013), որը պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտներ, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Դպրոցի կառուցման ենթակա տարածքը գտնվում է Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանում, ըստ կադաստրային վկայականի հողատարածքի իրավունքի տեսակը՝ սեփականություն, հողի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման: Հողամասի նպատակային նշանակությունը համապատասխանում է նախագծի իրականացման նպատակներին:

Նախատեսվող գործունեության տարածքը կառուցապատված չէ: Հողամասի մակերեսը կազմում է 5,225888 հա (այսուհետև՝ 5,2 հա): Տարածքում շինություններ չկան:

Ք. Երևան, Դավթաշեն վ/շ, Ա. Միկոյան փ. 111/7 հասցեն տեղակայված է Դավթաշենի հիմնական տրանսպորտային առանցքներից մեկի՝ Անաստաս Միկոյանի փողոցի վրա՝ Դավթաշենի 3–4-րդ թաղամասերի հարևանությամբ: Տարածքը լավ կապված է գլխավոր ճանապարհներին. Եղվարդի խճուղին ուղիղ գծով մոտ 0,5- 1.0 կմ հեռավորության վրա է, իսկ Դավթաշենի կամուրջը՝ մոտ 1.9 կմ, որոնք ապահովում են դուրս եկող կապերը դեպի Կոմիտասի պողոտա, Արաբկիր և քաղաքի կենտրոնական մասեր: Մոտակա փողոցներից կարևոր են նաև Տիգրան Պետրոսյանի և Սասնա Ծռեր փողոցները, որոնք հանդիսանում են

որպես Դավթաշենի հիմնական հատուղիներ: Շրջակայքում կան նաև հասարակական–կոմերցիոն նշանակության օբյեկտներ: Մոտակա բնակելի շինությունը գտնվում է դիտարկվող տարածքից մոտ 20 մ հեռավորությամբ: Տարածքի անմիջական հարևանությամբ՝ մոտ 50 մ հեռավորությամբ, գտնվում է «Արաքս» մետաղաշինարարական գործարանը:

ՆԿ 1. Իրավիճակային քարտեզ

Նախատեսվող գործունեության նախագծային լուծումները հիմնվել են ՀՀ քաղաքաշինական և նորմատիվ փաստաթղթերի, ՀՀ գործող շինարարական նորմերի վրա, մասնավորապես.

- ✓ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում»,
- ✓ ՀՀՇՆ 31-03-2018 «Հասարակական շենքեր և շինություններ» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թ. հոկտեմբերի 1-ի N82 հրամանում փոփոխություն կատարելու մասին:
- ✓ ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն»,
- ✓ ՀՀՇՆ 20.04 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն»,
- ✓ ՀՀՇՆII-0.00-2006 «Հակահրդեհային անվտանգություն. նախագծման նորմեր»,
- ✓ ՀՀՇՆ VI 13.102-99 «Բետոնյա և երկաթբետոնյան կոնստրուկցիաներ»,

- ✓ СНиП 2.01.07-85 «Բեռնվածքներ և ազդեցություններ»,
- ✓ СНиП 2.03.11-85 «Շինարարական կոնստրուկցիաների պաշտպանություն կորոզիայից»,
- ✓ СНиП 12-01-2004 «Շինարարության կազմակերպում»:
- ✓ Այլ նորմեր և կարգավորումներ:

Նախագծվող Ֆուտբոլի դպրոցի համալիրը կազմված է հինգ մասնաշենքերից:

Նախագծի տեխնիկատնտեսական ցուցանիշները ներկայացված են ստորև աղյուսակի միջոցով:

Հողամասի մակերես	5,225888 հա
Կառուցապատման մակերես	11460 քմ
Կառուցապատման տոկոս	43 %
Կանաչապատման մակերես	11965 քմ
Կանաչապատման տոկոս	22 %
Մասնաշենքերի քանակ	5
Հասարակական տարածքի մակերես	285,7 քմ
Ավտոկայանատեղիի հզորություն	186 տեղ
Շինարարական մակերես	17571 քմ
Ջրաթափանց մակերես	30820 քմ
Անջրաթափանց մակերես	11750 քմ

Նախագծով նախատեսված է 5 մասնաշենք՝Ա, Բ,Գ, Դ, Ե: Նախագծված Ա մասնաշենքը իրենից ներկայացնում է հասարակական նշանակության շինություն՝ երկու վերգետնյա հարկերով: Շենքի արտաքին չափերը՝ 8.16*60.16մ են, շենքի բարձրությունը՝ 8,95մ: Առաջին հարկում նախատեսված են նախասրահ, հասարակական տարածքներ և սանհանգույց: Նախատեսված է նաև ԲՍԽ-երի համար սանհանգույց: Երկրորդ հարկում նախատեսված է՝ նախամուտք, երկու բժշկական սենյակ, երկու հանդերձարան, երկու ցնցուղարաններ, միջանցք և պահեստային տարածքներ: Շենքի արտաքին երեսպատումը նախատեսվում է իրականացնել բարձրորակ սվաղով հետագա ներկմամբ, ջերմամեկուսացումը նախատեսվում է իրականացնել XPS սալերով, ապահովելով շենքի բարձր էներգոէֆֆեկտիվությունը: Աստիճանավանդակների դռները նախատեսված են ալյումինե՝ հակախուճապային և ինքնափակվող: Շենքի տանիքը հարթ է՝ արտաքին ջրահեռացմամբ: Նախատեսված է ջեռուցման, օդափոխության և

հովացման համակարգեր: Տեղադրված են օդափոխության VRF սարքեր: Նախատեսված է հակահրդեհային և անվտանգության համակարգ:

Նախագծված Բ մասնաշենքը իրենից ներկայացնում է փակ մարզադաշտ՝ երեք վերգետնյա հարկերով : Շենքի արտաքին չափերը՝ 82,95*75,75մ են,շենքի բարձրությունը՝ 17,46մ: Ահա պարզաբանումը, որը կարող եք ներառել ՇՄԱԳ-ում կամ ուղարկել որպես պաշտոնական պատասխան՝ հստակ և հիմնավորված ձևով: Հաշվի առնելով շինարարության նորմերն ու շենքի ֆունկցիոնալ առանձնահատկությունները՝ բարձրության 17,46 մ նախագծումը պայմանավորված է մարզահրապարակ / մարզադահլիճ տիպի շենքերի համար գոյություն ունեցող նորմատիվ պահանջներով, որոնք սահմանում են նվազագույն անհրաժեշտ ներքին և ընդհանուր բարձրությունները: Սպորտային դահլիճների նվազագույն ազատ (մաքուր) բարձրությունը, որը սահմանվում է ՀՀ տեղական և համապատասխան միջազգային ֆեդերացիաների կարգավորման պահանջներով, սովորաբար պահանջում է նվազագույնը 12 մ և ավելի ազատ բարձրություն: Տեխնիկական հարկի և շենքի ծածկի ինժեներական համակարգերի (օդափոխություն, ջեռուցում, էլեկտրատեխնիկական անցուղիներ) ապահովման համար պահանջվող լրացուցիչ բարձրություն: Այս պահանջները հաշվի առնելով՝ նախագծային կանոնները նախատեսում են, որ նմանատիպ մարզահրապարակային շենքերի ընդհանուր բարձրությունը կազմի մոտ 17–18 մ: Այսինքն՝ նախագծային 17,46 մ բարձրությունը բխում է գործող շինարարական և ֆունկցիոնալ պահանջներից և հանդիսանում է նորմատիվորեն անհրաժեշտ ցուցանիշ:

Առաջին հարկում նախատեսված է քայլուղի, ռեկրեացիոն գոտի, խաղադաշտ, տեխնիկական սենյակներ, էլ. վահանակների երկու սենյակ, սանհանգույցներ, ցնցուղարաններ, հանդերձարաններ, մերսման սենյակներ, շոգեբաղնիք, սրճարան, սրճարանի խոհանոց, տերասա: Առաջին հարկում նախատեսված է նաև բնակչության սակավաշարժ խմբերի (ԲՍԽ) համար սանհանգույցներ: Նախատեսված է չորս հիմնական աստիճանավանդակ:

Առաջին հարկի ընդհանուր մակերեսը կազմում է 5486,5 ք.մ։ Երկրորդ հարկում նախատեսված են սանհանգույցներ, տեխնիկական սենյակներ, տնտեսական սենյակներ, ադմինիստրատիվ սենյակ, հանգստի սենյակներ։ Երկրորդ հարկի ընդհանուր մակերեսը կազմում է 966,1 ք.մ։ Երրորդ հարկում նախատեսված են սանհանգույցներ և տեխնիկական սենյակներ։ Երրորդ հարկի ընդհանուր մակերեսը կազմում է 537,6 ք.մ։ Երրորդ հարկից դեպի երկրորդ հարկ նախատեսված է ևս չորս երկրորդական տարահանման աստիճանավանդակ։ Շենքի արտաքին երեսպատումը նախատեսվում է իրականացնել սենդվիչ պանելներով և կորտեն սալերով, ջերմամեկուսացումը նախատեսվում է իրակնացնել հանքային բամբակի սալերով, ապահովելով շենքի բարձր էներգոէֆֆեկտիվությունը։ Տարահանման ելքերի դռները նախատեսված է ալյումինե հակախուճապային և ինքնափակվող։ Շենքի տանիքը հարթ է՝ կազմակերված ներքին ջրահեռացմամբ։ Նախատեսված է ջեռուցման, օդափոխության և հովացման համակարգեր։ Տեղադրված են օդափոխության VRF սարքեր։ Շենքը համլրված է հակահրդեհային և անվտանգության համակարգերով:

Նախագծված Գ մասնաշենքը իրենից ներկայացնում է բաց տրիբունա՝ երեք վերգետնյա հարկերով։ Շենքի արտաքին չափերը՝ 34,60*93,70մ են, շենքի բարձրությունը՝ 14,80մ։ Առաջին հարկում նախատեսված է երկու մարզասրահ, ցնցուղարաններ, հանդերձարաններ, սանհանգույցներ, տեխնիկական սենյակներ, մերսման սենյակներ, ադմինիստրատիվ մաս, ենթակայան, ջրի պոմպակայան, խմելու ջրի ռեզերվուար, հակահրդեհային ջրի պոմպակայան, հակահրդեհային ջրի ռեզերվուար, էլ վահանակների սենյակ, մարզադաշտի պահեստներ։ Նախատեսված է նաև ԲՍԽ-երի համար սանհանգույց։ Նախատեսված է երկու հիմնական մուտք։ Հանդիսականների մուտքը դեպի տրիբունա կազմակերպված է թեքահարթակների միջոցով: Առաջին հարկի ընդհանուր մակերեսը կազմում է 2239,6 ք.մ։ Երկրորդ հարկում նախատեսված է սանհանգույցներ՝ նաև ԲՍԽ-երի համար և տեխնիկական սենյակներ։ Երկրորդ

հարկի ընդհանուր մակերեսը կազմում է 505,3 ք.մ։ Երրորդ հարկում տեղակայված է VIP զոնան։ Առաջին հարկից երրորդ հարկ բարձրանալու համար նախատեսված է աստիճանավանդակ և վերելակ։ Երրորդ հարկում բացի դիտումների սրահներից նախատեսված են նաև տերասաներ։ Երրորդ հարկի ընդհանուր մակերեսը կազմում է 654,8 ք.մ։ Շենքի արտաքին երեսապատումը նախատեսվում է իրականացնել ֆասադային դեկորատիվ սվաղով, ջերմամեկուսացումը նախատեսվում է իրակնացնել XPS սալերով։ Աստիճանների և նստատեղերի հատվածում երեսապատումը նախատեսվում է իրականացնել էպոքսիդային հիմքով քսուքով։ Տարհանման ելքերի դռները նախատեսված է ալյումինե հակախուճապային և ինքնափակվող։ Ամբողջ տրիբունան ծածկված է մետաղե կոնստրուկցիաներով, որը երեսպատված է փոշեներկված պրոֆիլավորված ցինկապատ թիթեղով և պոլիկարբոնատե սալերով։ Նախատեսված է ջեռուցման, օդափոխության և հովացման համակարգեր։ Տեղադրված են օդափոխության VRF սարքեր։ Շենքը համլրված է հակահրդեհային և անվտանգության համակարգերով։ Տվյալ շինության բոլոր կոնստրուկցիաները և արտաքին պատերը իրականացվելու են ե/բ-ից, ուստի շինությունը ինքնին ծառայում է որպես թաքստոց։ Առկա է խմելու և կենցաղային ջրի ռեզերվուար, տաք և սառը ջրի հասանելություն:

Նախագծված Դ մասնաշենքը իրենից ներկայացնում է ուսումնական նշանակության շինություն՝ երկու վերգետնյա հարկերով։ Շենքի արտաքին չափերը՝ 15*30մ են, շենքի բարձրությունը՝ 8,10մ։ Առաջին հարկում նախատեսված է բժշկական վերականգնողական կենտրոն, մեկ դասասենյակ, ուսուցչանոց և սանհանգույցներ։ Առաջին հարկում նախատեսված է նաև ԲՍԽ-երի համար սանհանգույց։ Երկրորդ հարկում նախատեսված է սանհանգույցներ և վեց դասասենյակ։ Շենքի արտաքին երեսպատումը նախատեսվում է իրականացնել բարձրօրակ սվաղով հետագա ներկմամաբ, ջերմամեկուսացումը նախատեսվում է իրակնացնել XPS սալերով, ապահովելով շենքի բարձր

էներգոէֆֆեկտիվությունը: Երկրորդ հարկից նախատեսված է տարհանման երկրորդ ելք՝ արտաքին աստիճանավանդակով: Աստիճանավանդակների դռները նախատեսված է ալյումինե հակախուճապային և ինքնափակվող: Շենքի տանիքը հարթ է՝ արտաքին ջրահեռացմամբ: Նախատեսված է ջեռուցման, օդափոխության և հովացման համակարգեր: Տեղադրված են VRF սարքեր: Առաջին հարկում նախատեսված է կաթսայատուն: Նախատեսված է հակահրդեհային և անվտանգության համակարգեր:

Նախագծված Ե մասնաշենքը իրենից ներկայացնում է Կաթսայատուն և տեխնիկական մասնաշենք: Կաթսայատունը մեկ վերգետնյա հարկով շինություն է: Շենքի արտաքին չափերը՝ 12,56*6,53մ են, բարձրությունը՝ 3,30մ: Շենքում նախատեսված է կենցաղային տաք ջրի կաթսայատուն, ջեռուցման կաթսայատուն, էլ. սարքավորումների կենտրոնացված վահանակ և տեխնիկական սենյակ: Տվյալ նախագծով ներկայացվող շենքի ծավալատարածական լուծումները համահունչ են ընդհանուր ֆուտբոլի դպրոցի միասնական անբաժանելի համալիրին: Շենքի արտաքին երեսպատումը նախատեսվում է իրականացնել բարձրորակ սվաղով հետագա ներկմամբ, ջերմամեկուսացումը նախատեսվում է իրակնացնել XPS սալերով, ապահովելով շենքի բարձր էներգոէֆֆեկտիվությունը: Շենքի տանիքը հարթ է՝ արտաքին ջրահեռացմամբ:

AMERIA ARENA


Գազի
Ընակելի հասարակ
Ս.Ա.
Ս.Ա.
Ս.Ա.

աշխատանքները կատարվելու են համաձայն աշխատանքային նախագծի՝ ՇՆուԿ 3.02.02.-87-ի և ՇՆուԿIII-4-81-ի պահանջներին համապատասխան:

Կանաչապատման նպատակով բերվելու է 1615.5 խմ ծավալով բուսահող:

ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԴԱՐՈՒՄ

Շինությունների արտաքին երեսպատումը նախատեսվում է իրականացնել բարձրորակ սվաղով հետագա ներկմամբ, ջերմամեկուսացումը նախատեսվում է իրակնացնել XPS սալերով, ապահովելով շենքի բարձր էներգոէֆֆեկտիվությունը: Շենքի տանիքը հարթ է՝ արտաքին ջրահեռացմամբ:

ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՍ

Էլեկտրական սնուցման համակարգերի և արտաքին ցանցերի իրականացումը կատարվելու է անմիջապես «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից: «ՀԷՑ» ՓԲԸ-ն պատասխանատու է լինելու դրանց շահագործման և անխափան աշխատանքի համար, իսկ տրանսֆորմատորային կայանն ապահովված է լինելու յուղահավաք համակարգով՝ արտակարգ իրավիճակների դեպքում հնարավոր արտանետումների պահման համար:

Նախագիծը մշակված է համաձայն ՊՄԷ-99 և ՀՀՇՆ31-03.01-2014 դրույթների:

Դպրոցի էլ.մատակարարումը իրականացվում է 400կՎԱ հզորությամբ լրակազմ տրանսֆորմատորային ենթակայանից:

Ըստ էլ.մատակարարման հուսալիության աստիճանի շենքի հոսանքասպառիչները դասվում են 2 կարգի:

Դպրոցի սնուցումը իրականացվում է 2 մալուխային գծերով:

Էլ.լուսավորությունը նախատեսված է հետևյալ տեսակների՝

1. բանվորական,

2. վթարային- էվակուացիոն,

Բաշխիչ վահանից տարված են սնող գծեր դեպի խմբային լուսավորության և ուժային վահաններ: Սնող գծերը նախատեսված է իրականացնել պղնձե մալուխներով:

Խմբային ցանցը նախատեսված է BBr ʜг-LS մակնիշի մալուխով ճկուն խողովակների մեջ:

Անջատիչները և վարդակները տեղադրվում են հատակից 1.8մ բարձրության վրա, այլ սենյակներում՝ հատակից 0.8մ, վահանակները՝ 1.5մ բարձրության վրա հատուկ պատրաստված խորշերի մեջ:

Բոլոր լուսատուների և վարդակների սնուցումը իրականացնել 3 հաղորդալարերով, նեռարյալ PE հաղորդալարը, իսկ բոլոր էլեկտրական սարքավորումների մետաղական կորպուսները կզրոյացվեն և կհողանցվեն:

Հրդեհի դեպքում նախատեսված է օդափոխության ամբողջ համակարգի անջատում:

Հողանցման և անվտանգության պաշտպանական միջոցներ:

Նախագծով ընդունված է հողանցման TN-C-S համակարգը:

Որպես պաշտանիչ միջոց նախատեսված է իրականացնել հողանցման օջախ 4 Օհմ դիմադրությամբ:

Շենքի անվտանգությունը ապահովելու համար կիրառվում են համալիր միջոցներ՝ Էլ.էներգիայի բաշխումը եռաֆազ ցանցում կատարվում է հինգ հաղորդալարով (L1,L2,L3,N,PE), միաֆազ ցանցում երեք հաղորդալարով (L1,N,PE), անցկացնելով առանձին PE հաղորդալարը, սկսած մուտքի վահանից:

Բոլոր էլ.մոնտաժային աշխատանքները կատարել համաձայն գործող էլեկտրատեխնիկական կանոնների և նորմերի:

ՋԵՌՈՒՑՈՒՄ ԵՎ ՕԴԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

1.Ընդհանուր տվյալներ

1.Ջեռուցման և օդափոխության համակարգերի նախագիծը կատարված է ճարտարապետական գծագրերի շինարարական նորմերի հիման վրա

ա) ՇՆ IV-12.02.01-04 "Ջեռուցում, օդափոխություն և օդի լավորակում"

բ) ՀՀՇՆ II-7.01-2011 "Շինարարական կլիմայաբանություն"

գ) ՀՀՇՆ 31-06-2009 "Հասարակական շենքեր և կառույցներ"

դ) ՀՀՇՆ 24.01-2016 "Շինարարական ջերմաֆիզիկա շենքերի պատող կոնստրուկցիաների"

2. Կլիմայաբանական տվյալներ

Տարվա ցուրտ ժամանակաշրջանի կլիմայական հարաչափերը՝

- Ջեռուցման, օդափոխության համակարգերի համար (ամենացուրտ հնգօրյակի) t= -20Եc,

- Ջեռուցման ժամանակաշրջանի տևողությունը (պայմանական) -20Եc 233 օր,

- Ջեռուցման ժամանակաշրջանի միջին ջերմաստիճանը (պայմանական) -20Եc -1.0Եc,

Ջերմամատակարարումը իրականացվում է սեփական կաթսայատնից, որը տեղակայված է -3.20 նիշի վրա:

Ջերմատարը՝ ջուր T1=80ԵC, T2=65ԵC բոլոր համակարգերի համար:

3.Ջեռուցում

1.-Ջեռուցումը նախատեսված է բնական գազի միջոցով՝ կաթսայատանը տեղադրվող կաթսաների միջոցով :

2. Ջեռուցման սարքերի ջերմատվությունը կարգավորելու համար նախատեսված են ջերմակարգավորիչ փականներ մատակարարի վրա, իսկ հետադարձի վրա՝ փակող փականներ:

3. Սենյակների ներսի օդի ջերմաստիճանները ընդունված են համաձայն գործող նորմերի:

4.Օդի հեռացումը համակարգից կատարվում է կանգնակների վրա տեղադրված ավտոմատ օդահան փականների և ջեռուցման սարքերի օդահանների միջոցով :

5.Մատակարար և հետադարձ խողովակները մեկուսացվում են ռետինե խողովակաձև ջերմամեկուսիչով:

6.Մոնտաժումից հետո ամբողջ համակարգը ենթարկվում է հիդրավլիկ փորձարկման, որից հետո կատարում են խողովակների փչամաքրում:

7.Համակարգերից ջրի դատարկումը կատարվում է կաթսայատնից:

4. Օդափոխություն

Դպրոցում նախատեսված են ընդհանուր ներածման և արտածման օդափոխություն մեխանիկական եղանակով՝

Փակ տարածքների համար նախատեսված է ներածման -արտածման ռեկուպերացիոն սարքեր, որոնք տեղադրված են արտաքին պատերին: Ներածման և արտածման համակարգերը, նախատեսված են վերաօգտագործման հատվածամասերով:

Ընդունված օդափոխության սխեման թույլ է տալիս տնտեսել ջերմության ծախսը:

Աշխատող օդափոխիչներից աղմուկի տարածումը բացառելու համար, ներածման և արտածման օդատարների վրա , օդափոխիչից հետո, նախատեսված են աղմկախլացուցիչներ:

Ընդհանուր օդափոխության օդաքանակները որոշված են համաձայն СНиП 2.08.02.-89:

Բոլոր օդատարները ընդունված են նրբաթիթեղ ցինկապատ պողպատից, որոնց համապատասխան հաստությունները նշված են անվանացանկում,իսկ հանդիսությունների դահլիճի համար ընտրված են դեկորատիվ օդատարներ:

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՄԱՍ

Ջրամատակարարման և ջրահեռացման մասի նախագիծը (Նախագծային փուլ) իրականացված է հիմք ունենալով նախագծման առաջադրանքը: Որպես ելակետային տվյալներ ծառայել են ճարտարապետական հատակագծերը, գլխավոր հատակագիծը և տեղանքի գեոդեզիական հանույթը:

Նախագծվող դպրոցի ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացները կազմակերպվելու են գործող շինարարական նորմերի ու կանոնների (ՇՆԿ) համաձայն:

Որպես հիմնական նորմատիվային փաստաթղթեր ծառայել են.

- ՀՀՇՆ 40-01.01-2014 Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում,
- ՀՀՇՆ 21-01.01-2014 Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն:

Նախագծով նախատեսված են հետևյալ համակարգերը՝

- Խմելու տնտ. ջրամատակարարում
- Տաք ջրամատակարարում:
- Հրդեհամարման համակարգ:
- Կենցաղային կոյուղի:
- Ջրամատակարարում:

Հատկացված տեխնիկական պայմանին համապատասխան՝ դպրոցի ջրամատակարարումը կիրականացվի հողատարածքից մոտ 500 մ հեռավորությամբ անցնող ջրատարից:

Ջրամատակարարումը ապահովվելու է քաղաքային ջրագծից, որը սպասարկվում է «Վեոլիա Ջուր» ընկերության կողմից: Սառը ջրի մուտքագիծը նախատեսվում է 1-ին հարկի հատակի տակով, PE Φ40մմ տրամագծի խողովակով: Կենցաղային ջրամատակարարման ապահովման համար Գ մասնաշենքում նախատեսված է պոմպակայան և 2 մետաղական բաք՝ չժանգոտվող մետաղից՝ 2000x2000x1500H չափերով, յուրաքանչյուրը V=6 խմ ծավալով: Պոմպակայանում նախատեսված են 2 հատ ինվերտորային կայանքներ

3 պոմպով ՝ երկուսը աշխատող, մեկը՝ պահուստային՝ H=25 մ, Q=7.50 խմ/ժամ, N=2.5 ԿՎտ, 220 Վ: Բաժանարար գծերը և սանիտարական սարքերի մոտեցումները նախատեսված է իրականացնել պոլիէթիլենային PE և պոլիպրոպիլենային PPR PN 16 խողովակներից՝ Φ20-40մմ:

Տաք ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել լոկալ գազի կաթսայով: Մարզադաշտի հարակից տարածքում նախատեսվում է կաթսայատուն, որտեղից իրականացվելու է տաք ջրամատակարարման սնուցումը: Բաժանարար գծերը նախատեսված է իրականացնել պրոյիպրոպիլենային, PPR PN 20 խողովակներից Φ20- 50 մմ:

Կենցաղային կոյուղու համակարգը նախատեսվում է կառուցել ոչ ճնշումային կոյուղու երկշերտ, ծալքավոր ՝ D174/150 մմ և D230/200 մմ և D290/250 տրամագծերով ԲԽՊԷ պոլիէթիլենե խողովակներով: Շենքերից դուրս կենցաղային կոյուղու թողարկները նախագծվող կոյուղատարին են միանում հանգուցային կոյուղու դիտահորերով՝ հավաքովի երկաթբետոնե էլեմենտներից: Նախատեսվում է թվով 29 հատ D=1000մմ տրամագծով կոյուղու դիտահորեր և թվով 3 հատ D=1500մմ տրամագծով կոյուղու դիտահորեր ՝ հավաքովի երկաթբետոնե էլեմենտներից: Բոլոր դիտահորերի վրա նախատեսված են ճանապարհային ծածկի սալեր՝ Т տիպի թուջե մտոցով: Խրամուղու նախապատրաստական և պաշտպանիչ շերտերը նախատեսվում է իրականացնել ավազով, իսկ վերջնական ետլիցքը՝ բերովի ավազակոպիճային գրունտով՝ տոփանումով: Կենցաղային կեղտաջրերը ինքնահոս տարբերակով հեռացվելու են բակային ցանցից հավաքվելով դեպի կոյուղաջրերի հավաքման քաղաքային կոլեկտոր՝ համաձայն տեխնիկական պայմանի: Կոդուղագծի կանգնակները նախատեսված են իրականացնել հորանների մեջ: Կոյուղու ցանցը իրականացվելու է պոլիվինիլքլորիդային ոչ ճնշումային կոյուղու լայմանակավոր PVC Φ50-160 մմ խողովակներից: Հասարակական մասնաշենքի կենցաղային կեղտաջրերի հեռացման համար նախատեսված են 8 հատ թողրակներ, 160մմ տրամագծով: Կենցաղային կեղտաջրերը շենքից հեռանում են 1-ին հարկ հատակի տակով:

Մարզադաշտի մասնաշենքի տանիքից անձրևի և հալոցքի ջրերը ներքին ջրահոսի ցանցով հեռացվում են՝ բակային ցանցից հավաքվելով դեպի քաղաքային կոլեկտոր:

Կոյուղագիծը կմիանանա տարածքից մոտ 500 մ հեռավորությամբ անցնող կոյուղատարին:

Սառը ջրամատակարարում ներբակային համակարգ իրականացնելու համար, բաց տրիբունայի տարածքում նախատեսված է պոմպակայան, որտեղ նախատեսված են 2 հատ պաշարապահ բաքեր և ինվերտորային պոմպային կայանք: Յուրաքանչյուր մասնաշենքում մուտքագիծը նախատեսվում է 1-ին հարկի տակով: Հասարակական մասնաշենքի և կաթսայատան համար մուտքագիծը նախատեսված է DN40մմ պոլիէթիլենային խողովակով, ուսումնական մասնաշենքի համար DN32մմ, իսկ փակ և բաց տրիբունաների համար DN75մմ խողովակներով: Յուրաքանչյուր մասնաշենքի մուտքագծից առաջ նախատեսված է պոլիմեր ավազային փականային հորեր:

Տաք ջրամատակարարումը ներբակային համակարգ նախատեսվում է իրականացնել լոկալ գազի կաթսաներով:Հասարակական մասնաշենքի և ուսումնական դպրոցի տարածքում նախատեսված են առանձին կաթսաներ որոնք սպասարկելու են վերոնշյալ մասնաշենքերը: Իսկ փակ և բաց տրիբունաների տաք ջրամատակարարումն իրականացնելու համար նախատեսված է կաթսայատուն որտեղ տեղադրված են գազի կաթսաները և տաք ջրամատակարարման բոյլեր 2 հատ 3000լ ծավալով, համակարգի անխափան աշխատանքի համար: Բաց և փակ տրիբունանաերի մուտքագիծը նախատեսվում է 1-ին հարկի տակով DN75մմ խողովակներով: Յուրաքանչյուր մասնաշենքի համար նախատեսված է նաև տաք ջրամատակարարման հետադարձի խողովակաշարերը:

ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ

Նախագծային փաստաթղթերը պարունակում են առանձին բաժին ֆուտբոլի դպրոցի տարածքի բարեկարգման և կանաչապատման վերաբերյալ, համաձայն որի կառուցապատումից ազատ մնացած տարածքները կբարեկարգվեն և կկանաչապատվեն: Տարածքի կանաչապատման աշխատանքների նախագծումն իրականացվել է հաշվի առնելով ֆուտբելի դաշտերի մոտակայքում կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները:

Կանաչապատման մակերեսը կազմելու է 11965 քմ: Տարածքը նախատեսվում է կանաչապատել արժեքավոր և տեղանքի բնակլիմայական առանձնահատկություններին համապատասխանող բուսատեսակներիով, ինչպես նաև իրականացնել սամշիտ, սիզամարգեր և ստեղծել ծաղկանոց: Նախատեսվում է իրականացնել նոր ծառատեսակների և թփերի տնկման աշխատանքներ: Նախատեսվում է տնկել 76 հատ ծառ և թուփ՝ Սոֆորա (10), կատալպա (14), ասպիրակ վանհուտի (8),պոտենցիլա ֆրուտիկոսա (44): Կանաչապատման ամբողջ տարածքը չիմապատվելու է:

Տնկարկն իրականացնելու համար կմշակվեն համապատասխան խորության և տրամագծի փոսորակներ: Կանաչապատման նպատակով օգտագործվող լրացուցիչ բուսահողը անհրաժեշտության դեպքում ձեռք է բերվելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ պայմանագրային հիմունքներով: Նորատունկ բուսականության խնամքը հետագայում կիրականացվի կրթահամալիրի կողմից, ինչը կներառի նաև նորատունկ կանաչ գոտու վիճակի մշտադիտարկումները, որի ընթացքում կպչողականություն չապահովող ծառատեսակները կփոխարինվեն նորերով:

Ոռոգման ջրապահանջ

Ոռոգման նպատակով ջրապահանջը որոշվում է СНиП 2.04.02-84-ի համաձայն, այսինքն, 1մ^2 ոռոգման նպատակով անհրաժեշտ է 0.3-0.4լ ջուր, հետևաբար.

W = (M x 0.4) x m, որտեղ

M – կանաչապատման ենթակա տարածքն է ըստ կանաչապատման տեսակային կազմի,

M - ոռոգման հաճախականությունը կախված սեզոնից և կլիմայական առանձնահատկությունից,

հետևաբար,

W =11965*0.4*20= 95720 լ/ջուր կամ 95,72մ^3/տարի ջուր (տարվա կտրվածքով)։

Տարածքում ոռոգման ջրամատակարարումը բացակայում է: Ոռոգման համար պահանջվող ջուրը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով։ Պայմանագիրը կկնքվի Կապալառու կազմակերպության կողմից տեխնիկական ջուր մատակարարող կազմակերպության կամ անձի հետ, որն ունի համապատասխան լիցենզիա։ Պայմանագրում կհստակեցվի նաև ջրառի կետը։

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Շինարարական հրապարակի կազմակերպումն իրականացվելու է բացառապես նախատեսվող գործունեության տարածքի սահմաններում, կիրառելով գործող նորմերով սահմանված պահանջները, մասնավորապես՝

- ✓ տարածքի ժամանակավոր ցանկապատում,
- ✓ շինարարական հրապարակի լուսավորության ապահովում,
- ✓ ժամանակավոր կառույցների տեղադրում՝ ապահովելով սանիտարահիգենիկ, կենցաղային և հանգստի պայմանները (ընդմիջման ու հանգստի գոտիներ, խմելու և կենցաղային ջրի մատակարարում, աշխատատեսչի աշխատասենյակ և այլն),

- ✓ շինանյութերի ժամանակավոր պահեստավորման և թափոնների կուտակման վայրերի կազմակերպում,
- ✓ շինարարական աշխատանքների համար անհրաժեշտ հիմնական մեքենա-սարքավորումների կայանատեղիների հատկացում:

Կոմունիկացիաների վերատեղադրում չի նախատեսվում: Շինարարության նախապատրաստական փուլում կիրականացվի անհրաժեշտ կոմունիկացիաների միացումը գործող գծերին (էլեկտրաէներգիա, լուսավորություն, ջրամատակարարում):

ՇԻՆՄՈՆՏԱԺԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Շինարարական աշխատանքները նախատեսվում է իրականացնել ավանդական տեխնոլոգիաներով՝ շինարարական կազմակերպության սեփական մեքենա-մեխանիզմների կիրառմամբ, իսկ դրանց բացակայության դեպքում՝ վարձակալված տեխնիկայի ներգրավմամբ:

Կապալառուն պարտավոր է շինարարական աշխատանքների մեկնարկից առաջ ստանալ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրված բոլոր անհրաժեշտ համաձայնությունները, որոնք վերաբերում են.

- ✓ գործող կոմունիկացիաների, էլեկտրահաղորդիչ գծերի և գազատարի հետ հատմանը,
- ✓ շինարարական թափոնների տեղափոխմանը,
- ✓ գործող ավտոճանապարհների տարածքում շինարարական աշխատանքների իրականացմանը:

Կոմունիկացիաների հատման հատվածներում աշխատանքները կիրականացվեն բացառապես լիազորված մարմինների ներկայացուցիչների ներկայությամբ և նրանց թույլտվությամբ:

Շինարարության նախապատրաստական աշխատանքներ

Նախապատրաստական փուլում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- ✓ ժամանակավոր ցանկապատի և տեղեկատվական վահանակների տեղադրում,
- ✓ անհրաժեշտության դեպքում կոմունիկացիաների վերատեղադրում և տեղափոխում,
- ✓ գործող կոմունիկացիաներին միացում,

- ✓ ժամանակավոր շինությունների և ինժեներական ցանցերի տեղադրում,
- ✓ անիվների լվացման կետի կազմակերպում,
- ✓ անվտանգության նշանների և հակահրդեհային միջոցների տեղադրում,
- ✓ աշխատողների անվտանգության տեխնիկայի վերաբերյալ հրահանգավորում։

Նյութատեխնիկական մատակարարում

Շինարարական աշխատանքների նյութատեխնիկական մատակարարումը կիրականացվի լիցենզավորված մատակարարներից հետևյալ սխեմայով.

- ✓ շաղախի և բետոնի առաքում՝ մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով, պարբերականությամբ, որը կապահովի շինարարական գործընթացի անընդհատությունը,
- ✓ երկաթբետոնե հավաքովի կոնստրուկցիաների պատրաստում՝ Երևանի և հարակից տարածքների շինարդյունաբերական հզորությունների ներգրավմամբ,
- ✓ մետաղական կոնստրուկցիաների, ամրանների և կմախքների առաքում՝ ավտոմոբիլային փոխադրամիջոցներով անմիջապես շինհրապարակ, տեղադրման և պահեստավորման համար,
- ✓ հարդարման նյութերի առաքում՝ անմիջապես շինհրապարակ կամ կազմակերպության բազա՝ հետագա տեղափոխման նպատակով,
- ✓ տրանսպորտային միջոցների սպասարկում և վերանորոգում՝ մասնագիտացված ավտոտեխսպասարկման կետերում։

Շինարարական հրապարակում բետոնաշաղախի պատրաստման գործընթաց չի իրականացվի. այն կառաքվի բետոնախառնիչներով՝ պայմանագրային հիմունքներով և աշխատանքների կատարման համար անհրաժեշտ հաճախականությամբ։

Շինանյութերի պահեստավորում և թափոնների կառավարում

- ✓ Սորուն նյութերը (ավազ, խիճ, հողային հանույթ) պահեստավորվելու են ծածկված վիճակում։
- ✓ Մետաղական կոնստրուկցիաները և ամրանները պահվելու են հողային շերտից բարձր և ծածկերի տակ՝ արտաքին միջավայրի

ազդեցությունից և կոռոզիայից պաշտպանելու նպատակով։

- ✓ Մնացած շինանյութերի պահեստավորումը կիրականացվի նորմատիվատեխնիկական պահանջներին համապատասխան։
- ✓ Թափոնների կուտակման և պահեստավորման վայրերը կկազմակերպվեն բացառապես գործունեության վարչական տարածքի սահմաններում։

Շինարարական տեխնիկայի մուտքը կկազմակերպվի գործող ճանապարհով՝ հնարավորինս չխոչընդոտելով գործող դպրոցի բնականոն գործունեությանը և հարակից տարածքների երթևեկությանը։

Շինարարական աղբը պարբերաբար կհեռացվի տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված վայր՝ ծածկով ապահովված բեռնատարներով։ Կենցաղային աղբի կուտակման համար կտեղադրվեն աղբամաններ։ Ընդհանուր ծավալը կանխատեսվում է շուրջ 3 տոննա, որի տեղափոխումը կիրականացվի աղբահավաք ծառայություն մատուցող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով։

Օրենսդրական պահանջների պահպանում

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում կապալառուն պարտավոր է պահպանել ՀՀ կառավարության 2002թ. ապրիլի 20-ի N 438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի պահանջները։ Պատմական, գիտական, գեղարվեստական կամ այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և այլ օբյեկտների հայտնաբերման դեպքում աշխատանքները ենթակա են անհապաղ դադարեցման՝ լիազորված մարմիններին տեղեկացնելու պարտավորությամբ։

Ժամկետներ և աշխատուժ

Շինարարության նորմատիվ տևողությունը՝ 24 ամիս (ըստ օրացույցային ժամանակացույցի)։

Աշխատուժի կանխատեսվող միջին թիվը՝ 130 մարդ, այդ թվում.

- ✓ ինժեներատեխնիկական անձնակազմ – 7 մարդ,
- ✓ բանվորներ – 123 մարդ (ներառյալ օժանդակ տնտեսությունները)։

Աշխատանքները կիրականացվեն հիմնականում բարձր որակավորում ունեցող մասնագետների բրիգադների կողմից։ Ոչ մասնագիտական բանվորական ուժի կիրառումը կսահմանափակվի։ Շինարարության ընդհանուր ղեկավարումը կիրականացվի տեղամասի պետի և աշխղեկի կողմից։

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Դիտարկվող տարածքը գտնվում է Երևանում, Դավթաշեն վարչական շրջանի Ա. Միկոյան փ. 111/7 հասցեում։ Հողամասի իրավունքի տեսակը՝ անհատույց օգտագործում, հողի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման։ Հողամասի նպատակային նշանակությունը համապատասխանում է նախագծի իրականացման նպատակներին։

Նախատեսվող գործունեության տարածքը կառուցապատված չէ։ Հողամասի մակերեսը կազմում է 5,225888 հա (այսուհետև՝ 5,2 հա)։ Տարածքում շինություններ չկան։

<u>Գեոմորֆոլոգիական</u>

Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածքի սահմաններում ռելիեֆի հիմնական տարրերն են հանդիսանում Եղվարդի սարավանդը (Եղվարդի սարավանդի հարավ- արևելյան ծայրամասը), եւ Հրազդան գետի կիրճը։ Հրաբխային սարավանդի լանջերը, արևելքից արևմուտք հարում են Հրազդան գետի զառիթափ լանջերին։

<u>Երկրաբանական կառուցվածքը</u>

Ըստ հորատման, ֆոնդային նյութերի և տարածաշրջանի մանրամասն տեղազննման շրջանի երկրաբանական կառուցվածքի ձևավորման գլխավոր գործոնը՝ ուսումնասիրության ենթակա ենթաշրջանների սահմաներում մասնակցում են նեոգենի ժամանակաշրջանի,վերին պլիոցեն դարակարգից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք

հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխանստվածքային ֆացիաներով: Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հողմնահարված, էրոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաեւ չորրորդական եւ ժամանակակից առաջացումներ:

Տարածքի երկրաբանական նկարագրությունը

Համաձայն կատարված ուսումնասիրությունների[1], հորատման և ֆոնդային նյութերի տվյալների՝ (նախկինում լաբորատոր ուսումնասիրման հիման վրա) ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են հետևյալ գրունտերից վերևից–ներքև:

Շերտ-1 կավավազ բաց դարչնագույն, դեղնավուն երանգով, կարբոնատացած, տարահատիկ փոշենման ավազների նրբաշերտերով և խճի, մանրախճի հազվադեպ մեծաբեկորների պարունակությամբ : Գրունտներն ըստ շահագործման դժվարության համաձայն ՍՆԻՊ IV-2-84-ի (34բ) II կարգ է

Շերտ-2 Տարբեր ապարների մանրախճային նստվածքներ 25-30% կավավազային լցանյութով տեղ-տեղ մանրաբեկորներով: Դելյուվիալ-պրոլյուվիալ առաջացումներ են: Գրունտներն ըստ շահագործման դժվարության համաձայն ՍՆԻՊ IV-2-84-ի (13) IV կարգ է:

Շերտ-3 բազալտներ ամուր բեկորային անջատումներով մոխրագույն, մուգ մոխրագույն, ծակոտկեն, տեղ-տեղ խոռոչավոր, թույլ ճեղքավոր, հոծազանգված, խճաքարա-խճավազային նստվածքների մոտ 10-15% լրացումով, տեղ-տեղ խարամացված:Նեոգենի ժամանակաշրջանի, վերին պլիոցեն դարակարգի հրաբխային ապարներ են: Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ ՍՆԻՊ IV-2-84-ի (19) VII կարգ է:

Հիդրոերկրաբանական պայմանները

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածաշրջանում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա, քանի որ

[1] Իրականացվել «Հայր և որդի Տիտիզյաններ» ՍՊԸ կողմից, Լիցենզիա ՔՊԼ 000804, 1-ին դաս:

հրաբխածին կազմավորումները բնութագրվում են ճեղքավորվածությամբ: Ուսումնասիրվող տարածքն աղքատ է գրունտային ջրերից: Տվյալ տեղամասում մինչև 10 մետր խորությամբ փորված հորատանցքներով ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել և ըստ արխիվային նյութերի հրաբխային սարահարթի սահմաններում դրանք գտնվում են 70 մետրից խորը հորիզոններում՝ բեռնաթափվելով Հրազդան գետի հովտում, իսկ ավելի խորը տեղակայված ջրերը սնում են Արարատյան հարթավայրի հորիզոնները:

Երկրաբանական և ինժեներա-երկրաբանական պրոցեսները և երևույթները

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն՝ ուսումնասիրվող տարածքում բացակայում են:

Շրջանի սեյսմիկ պայմանները ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ - 20.04.2020թ.-ի, գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների Amax= 0.4g արագացմամբ:



Կառուցապատման ենթական տարածքի ինժեներա - երկրաբանական ուսումնասիրությունների հաշվետվությունը ներկայացված է Հավելվածում:

Կլիմա

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանում: Շինարարական կլիմայաբանություն» ՀՀՇՆ 22-01-2024 շինարարական նորմերի համաձայն՝ ստորև ներկայացված են օդերևութաբանական դիտարկումներով պայմանավորված որոշ կլիմայական տվյալներ ըստ «Երևան Արաբկիր» օդերևութաբանական կայանի դիտարկումների, որն ամենամոտն է նախատեսվող գործունեության տարածքին:



ՆԿ 2. Կլիմայական շրջանցման սխեմատիկ քարտեզ

Ըստ ներկայացված տվյալների միջին տարեկան օդի ջերմաստիճանը կազմում է +12.0 °C, ամենացուրտ ամիսը հունվարն է՝ -3.8 °C, իսկ ամենատաքը հուլիսը՝ +25.8 °C, բացարձակ նվազագույնը հասել է -30.1 °C-ի, իսկ առավելագույնը՝ +41.6 °C-ի: Օդի միջին հարաբերական խոնավությունը տարեկան կազմում է 59 %, ձմռանը այն բարձր է՝մինչև 77–78 %, իսկ ամռանը նվազում է մինչև 42–44 %: Տարեկան տեղումների քանակը 313 մմ է, որոնցից 128 մմ-ը թափվում է նոյեմբեր–մարտ ամիսներին, իսկ 185 մմ-ը՝ ապրիլ–հոկտեմբերին, ամենաաղքատ տեղումներով ամիսը օգոստոսն է (միջինում 8 մմ): Միջին տարեկան քամու արագությունը 1.9 մ/վ է, ուժեղ քամու օրերի թիվը կազմում է շուրջ 56, իսկ 100 տարվա կրկնելիությամբ հաշվարկային արագությունը կարող է հասնել 32 մ/վ: Ձմռանը ձնածածկույթը պահպանվում է մոտ 41 օր, առավելագույն բարձրությունը հասնում է 46 սմ-ի, իսկ ձյան ջրի պաշարը՝ մինչև 113 մմ:

Աղյուսակ 1. Օդի միջին ջերմաստիճան

Բնակավայրի անվանում	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, oC												Միջին տարեկան oC	Բացարձակ նվազագույն oC	Բացարձակ առավելագույն oC
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
Երևան «Արաբկիր»	-2.7	-0.2	5.8	11.9	16.6	21.3	24.9	24.7	20.4	13.7	3.6	0.2	11.9	-20.6	41.9

Աղյուսակ 2. Օդի հարաբերական խոնավություն

	Օդի հարաբերական խոնավություն, %																
	Ըստ ամիսների												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավություն, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավություն, %	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		Միջին ամսական	Միջին ամսական –ամը15 -ին	Միջին ամսական	Միջին ամսական –ամը15 -ին
Երևան «Արաբկիր»	77	70	60	57	57	52	50	50	51	60	68	77	61	77	68	50	37

Աղյուսակ 3. Մթնոլորտային տեղումներ

Բնակավայրի Անվանումը	Տեղումների քանակ [illegible] մմ													Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին,մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	Ըստ ամիսների												Տարեկան		
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Երևան														[illegible]	[illegible]

«Արաբկիր»	28	31	38	52	54	27	18	8	13	29	29	27	354		
	25	28	44	34	47	47	34	22	47	34	48	26	48		

Աղյուսակ 4. Քամի

Բնակավայրի անվանում	Ամիսներ	Կրկնելիություն,% / Միջին արագություն, մ/վ ըստ ուղղությունների								Անդրդի կրկնելիությունը, %	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը, հունիս-օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր-փետրվար	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հյուսիս-արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս-արևմտյան						
Մարալիկ	Հունվար	13	29	8	7	14	20	6	3	45	0,9	ՀՎԱ ՐՄ	1,7	ՀՍԱ ԼԼ	1,9
		1,9	1,9	1,6	1,7	1,8	1,5	1,8	1,9						
	Ապրիլ	15	29	6	8	12	17	9	4	15	2,1				
		3,1	2,6	2,3	2,2	2,5	2,4	2,5	2,5						
	Հուլիս	28	32	3	3	8	16	7	3	13	3,4				
		6,0	4,8	1,7	1,7	1,7	1,7	2,0	2,6						
	Հոկտեմբեր	17	37	6	5	10	16	6	3	19	1,8				
		2,9	2,5	2,0	1,9	1,7	1,9	1,9	2,0						

Աղյուսակ 5. Քամու հաշվարկային արագություն

Բնակավայրի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥15մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը (մ/վ), որը հնարավոր է մեկ անգամ«ո» տարիների ընթացքում		
				25	50	100
Երևան «Արաբկիր»	889.8	1.9	28	22	24	26

Աղյուսակ 6. Ուժեղ քամիներով օրերի քանակը

Բնակավայրի	Ամսական միջին արժեքները, օր

անվանումը	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Երևան «Արաբկիր»	0,2	0,3	0,8	1,4	1,9	3,8	8,5	7,7	2,0	0,4	0,4	0,1	28

Աղյուսակ 7. Ձյան ծածկույթ

Բնակավայրի անվանում	Առավելագույն տասնօրյակային բարձրություն սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակ	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակ, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորություն, սմ
Երևան «Արաբկիր»	50	53	152	-

Մթնոլորտային օդ

ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանական մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Երևան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 45 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան: Մայրաքաղաքի տարբեր հատվածներում, տարբեր օրերին դիտվել են մթնոլորտային օդում փոշու և ազոտի երկօքսիդի պարունակությունների գերազանցումներ համապատասխան ՍԹԿ-ներից: Հունիս ամսվա ընթացքում փոշու օրական կոնցենտրացիաները գերազանցել են ՍԹԿ-ները համապատասխանաբար՝ 1.1-3.2 անգամ (18 օր), ազոտի երկօքսիդի կոնցենտրացիան գերազանցել է՝ 1.1-1.7 անգամ (17 օր): Ծծմբի երկօքսիդի և գետնամերձ օզոնի գերազանցումներ համապատասխան ՍԹԿ-ից չեն դիտվել:



Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու կոնցենտրացիաները



Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիաները



Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի կոնցենտրացիաները



Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի կոնցենտրացիաները

Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

ՀՀ կառավարության 2011թ. հունվարի 27-ի «Կախված տեղանքի առանձնահատ- կություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» N 75-Ն որոշմամբ Հայաստանում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝«գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների կառավարումը կատարվում է 6 ջրավազանային կառավարման տարածքների միջոցով: Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է 6 ջրավազանային կառավարման տարածքի ջրային ռեսուրսների 151 դիտակետ:

Երևանը գտնվում է Հրազդան ջրավազանային կառավարման տարածքում: Համաձայն 2024 թ. չորրորդ եռմասյակի շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ տեղեկագրում բերված տվյալների 2024 թ-ին հոկտեմբերին Հրազդան գետի ջրի որակը Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի, Գեղանիստ գյուղի և Երևանյան լճի մուտքի մոտ հատվածներում՝ գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Նախատեսվող գործունեության արդյունքում ջրային ավազանի աղտոտվածության ավելացում չի կանխատեսվում, քանի որ նախատեսվող գործունեության տարածքում և դրա մոտակայքում չկան մակերևութային ջրային ավազաններ կամ առուներ: Միևնույն ժամանակ ԲԿՊ-ում նախատեսված են անհրաժեշտ միջոցառումները՝ ուղղված հնարավոր ազդեցությունների նվազեցմանը/ կանխմանը:

<u>Հողային ծածկույթ</u>

Հողը երկրակեղևի մակերեսային փխրուն շերտն է, որը փոփոխվում է մթնոլորտի և օրգանիզմների ազդեցությամբ, լրացվում է օրգանական

մնացուկներով: Հողն անընդհատ զարգանում և փոփոխվում է: Բնութագրվում է բերրիությամբ՝ բույսերին մատչելի սննդանյութերով և ջրով ապահովելու ունակությամբ, որի շնորհիվ այն դառնում է արտադրամիջոց, աշխատանքի առարկա, նյութական բարիքների աղբյուր:

Հողը գյուղատնտ. արտադրության հիմնական միջոցն է. ագրոտեխնիկական, ագրոքիմիական ու բարելավող միջոցառումների կիրառմամբ այն կարելի է դարձնել առավել արդյունավետ, որի ցուցանիշը բույսերի բերքատվությունն է:

Արարատյան հարթավայրում առավել ցածրադիր տեղերում ձևավորվել են հումուսով աղքատ գորշ հողեր՝ բաց գորշագույն հողեր ու տիպիկ գորշահողեր՝ աղակալած տարածքներով: Անապատի համար բնորոշ այս հողերի առաջացմանը նպաստել են կլիմայի չորությունը և բուսական ծածկույթի աղքատությունը: Նախատեսվող գործունեության տարածաշրջանի հողերը պատկանում են մուգ շագանակագույն հողերի տիպին: Մուգ շագանակագույն հողերը մակերեսից ունենում են մուգ, երբեմն գորշավուն երանգավորում: Կուլտուրականացված շագանակագույն հողերը ձևավորվում են նախալեռնային հարթությունների վրա, տարբերվում են համեմատաբար հզոր հումուսային հորիզոնով (50-70 սմ) թույլ դիֆերենցված համասեռ պրոֆիլի կառուցվածքով: Հին ոռոգելի հողատեսքերը հիմնականում լվացված են և առանձնանում են որոշակի խտացվածությամբ: Այս հողերը բնութագրվում են խայտաբղետ մեխանիկական կազմով, որը պայմանավորված է ռելիեֆի լիտոլոգիական պայմաններով, ինչպես նաև ներհողային հողմնահարման և ոռոգման ազդեցություններով: Հողերի ձևավորման համար հիմք են հանդիսացել կարծր ապարների հողմնահարման նյութերը, որոնք առանձնանում են ապարների բեկորային բարձր պարունակությամբ:

Նկար Հողերի բնական տիպերի տարածման քարտեզ

Տարածաշրջանի հողերի տիպը կուլտուր-ոռոգելի և աղուտ-ալկալի է: Համաձայն կատարված ինժեներա-երկրաբանական ուսումնասիրությունների բուն կրթահամալիրի տարածքում առկա չէ հողաբուսական շերտ:

Հողերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի համաձայն: Հողերի քիմիական կազմի որոշումն իրականացվում է հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի (www.armmonitoring.am): 2022 թվականի հողային ծածկույթի ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներն իրականացվել են Լոռի, Վայոց ձոր, Գեղարքունիք, Տավուշ, Կոտայք, Արարատ, Սյունիք, Շիրակ և Արմավիրի մարզերում:

Համեմատականորեն ուշ հրապարակված տեղեկագրին

համապատասխան, որն է 2024 թ. 4-րդ եռամսյակում հողային ծածկույթի՝ ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներ իրականացվել են միայն Սյունիքի և Տավուշի մարզերում:

Գործունեության տարածքը կառուցապատված չէ, սակայն ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների արդյունքների համաձայն գործունեության տարածքում հողաբուսական շերտը բացակայում է: Հողային համակարգերի աղտոտվածությունը քիչ հավանական է:

<u>Բուսական և կենդանական աշխարհ</u>

Քանի որ նախատեսվող գործունեության տարածը գտնվում էքաղաքային միջավայրում, ուստի կենսաբազմազանության վերաբերյալ տեղեկատվությունը ավելի նպատակահարմար է ներկայացնել տարածաշրջանի կտրվածքով:

Հայաստանի Հանրապետությունում առանձնացվում է 12 ֆլորիստիկ շրջաններ: Ուսումնասիրվող տեղամասը գտնվում է Երևանի ֆլորիստիկ շրջանում (Հայաստանի Հանրապետության ֆլորիստիկ շրջանները ըստ Կ.Թամանյանի և Գ.Ֆայվուշի, 2009թ) և գրավում է կիսաանապատային լեռնահարթավայրային (500-1000մ.ծ.մ.) լանշաֆտային գոտին, որով և պայմանավորվում է տարածաշրջանի կենսաբազմազանությունը:

Երևանի ֆլորիստիկ շրջանը Հայաստանում երկրորդն է բուսատեսակների թվով, որոնց թիվը 1920 է : Ֆլորիստիկ շրջանի բարձրունքային սահմանները գտնվում է (700-1700մ.ծ.մ.): Բուսականության հիմնական տիպերն են՝ կիսաանապատներ, աղուտացված ճահիճներ, անապատ, տափաստաններ, գիհու նոսրանտառներ: Էնդեմիկ բույսերի քանակը՝ 46 է, Կարմիր գրքում գրանցված բուսատեսակերի թիվը՝ 144 է, ըստ („Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիա„ ՀՀ հինգերորդ ազգային զեկույցից, 2014 թ):



Նկար 1 Հայաստանի Հանրապետության ֆլորիստիկ շրջանները ըստ Կ.Թամանյանի և Գ.Ֆայվուշի (2009թ.)

Ուսումնասիրվող տեղամասը գտնվում է մոտավորապես 870-890մ բացարձակ բարձրության վրա: Այստեղ բուսականության հիմնական տիպերն են կիսաանապատային բուսականություն, ներառյալ ավազային անապատներ և աղուտներ: Բուն ուսումնասիրվող տարածքում անտառածածկ տարածքներ չկան:



Նկար 2 Հայաստանի Հանրապետության բուսական ծածկույթը

Տարածաշրջանին բնորոշ, ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակներ են՝

Նվարդակ քնարաձև (Lepidium lyratum L.), Աղածաղիկ կուլպական (Halanthium kulpianum), Կալախոտ կասպիական (Kalidium caspicum), Օշան Թամամշյանի (Salsola tamamschjanae),

Տարածաշրջանում համաձայն Ա. Մաղաքյանի հետազոտությունների, գրանցված է մոտ 130 բուսատեսակ, որոնցից որպես դոմինանտ կարելի է նշել հովվափողազգիներից (Alismataceae)՝ հովվափող լանցետային (Alisma lanceolatum), սովորական նետախոտը (Sagitaria sagittifolia l.), եռատերև նետախոտը (Sagitaria trifolia l.), հովանոցազգիներից՝ ակտոնոլեմ

խոշորաբաժակը (Actinolema macrolema), աննշմարակող անհարթապտուղը (Aphanopleura trachisperma), երնջակ Վանատուրի (Eryngium vanaturii), աստղածաղիկազգիներից՝ վարդատերեփուկ մուշկայինը (Amberboa moschata), խոզանափուշ բարակը (Caucinia tenella), կանգար տուրնեֆորի (Gundella turnefortii), կաթնուկ Թախտաջյանի (Lactuca takhtadzhianii), խաչածաղկավորներից՝ Isatis ornitorhynchus (լրջուն թռչնակտուց), ցախակեռասազգիներից՝ Sambucus tigranii (կտտենի, թանթրվենի Տիգրանի), մեխակազգիներից՝ Acanthophyllum pungens (փշատերևուկ ծակող), Allochrusa bungei (ալոխրուլա բունգեի), Dianthus libanotis (մեխակ Լիբանանի), թելուկազգիներից՝ Bienertia cycloptera (բիեներցիա շուրջաթև), Salsola tamamschjanae (օշան Թամամջյանի), Spinacia tetronda (սպանախ քառաեզ), լոբազգիներից՝ Astragalus paradoxus (գազ տարօրինակ), Trigonella capitata (հացիամեմ գլխիկավոր), ֆրանկենազգիներից՝ Frankenia pulverulenta (ֆրանկենիա փոշապատ), բորակաթուփազգիներից՝ Nitraria schoberi (բորակաթուփ շոբերի), հացազգիներից՝ Aegilops crassa (այծակն հաստ), Triticum araraicum (ցորեն Արարատյան), կարմրանազգիներից՝ Tamarix (կարմրան), Tanarix octandra (կարմրան ութառեզանի), զուգատերևազգիներից՝ Tetradiclis tanella (տետրադիկլիս բարալիկ) և այլն:

Բուն ուսումնասիրվող և հարակից տարածքներում ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակներ չկան, քանի որ այդ տարածքները ենթարկված են անտրոպոգեն ազդեցության, բնական էկոհամակարգերը ներկայումս խիստ փոփոխված և դեգրադացված են: Ուստի դրանց պահպանության համար հատուկ միջոցառումներ չի նախատեսվում:

Կաթնասուններ

Տեղանքին բնորոշ կաթնասուններից առավել տարածված են՝ Անտառային մուկ (Apodemus sylvaticus), Մոխրագույն համստերիկ (Cricetulus migratorius), Սովորական դաշտամուկ (Microtus arvalis), Սովորական ոզնի (Erinaceus europaeus), Լայնականջ ոզնի (Hemiechinus auritus) - գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում վտանգված կարգավիճակով, Փոքր ճագարամուկ (Allactaga elater)

- գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում վտանգված կարգավիճակով, Փոքրասիական ճագարամուկ (Allactaga euphratica), Մոխրագույն առնետ (Rattus norvegicus), Տնային մուկ (Mus musculus), Փոքրասիական ավազամուկ (Meriones blackleri Thom.), Պարսկական ավազամուկ (Meriones persicus), Աքիս (Mustela nivalis), Քարակզաքիս (Martes foina), Գայլ (Canis lupus), Սովորական աղվես (Vulpes vulpes), Նապաստակ (Lepus europaeus), Սովարական շնագայլ (Canis aureus), Եղեգնակատու (Felis chaus):

Սողուններ և երկենցաղներ

Տարածաշրջանի հերպետոֆաունան ներկայացված է՝ Սովարական լորտու (Natrix natrix), Ջրային լորտու (Natrix tessellata) Կանաչ դոդոշ (Bufo viridis), Լճագորտ (Pelophylax ridibundus), Երկարատ սցինկ (Eumeces schneideri) - գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում խոցելի կարգավիճակով, Շերտավոր մողես (Lacerta agilis), Շտրաուխի մողեսիկ (Eremias strauchi), Արևմտյան վիշապիկ (Eryx jaculus), Ձիթապտղագույն սահնօձ (Coluber najadum), Մողեսօձ (Malpolon monspessulanus), Անդրկովկասյան գյուրզա (Macrovipera lebetina):

Թռչուններ

Թռչուններից տարածաշրջանում հանդիպող տեսակներն են՝ Փոքր սուզակ (Podiceps ruficollis), Մոխրագույն տառեղ (Ardea cinerea), Դեղին տառեղ (Ardeolla ralloides), Կվակվա (Nycticorax nycticorax), Սպիտակ արագիլ (Ciconia ciconia), Փոքր ջրցուլ (Ixobrychus minutus), Սև ցին (Milvus migrans), Մեծ ճուռակ (Buteo buteo), Սովորական հողմավար բազե (Falco tinnunculus), Մոխրագույն սագ (Anser anser) - գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում խոցելի կարգավիճակով, Կոնչան բադ (Anas platyrhynchos), Կարմրագլուխ սուզաբադ (Aythya ferina), Քարակաքավ (Alectoris chukar), Լոր (Coturnix coturnix), Սև փարփար (Fulica atra), Եղեգնահավ (Gallinula chloropus), Սովորական կիվիվ (Vanellus, vanellus), Կարմրաոտ կտցար (Tringa totanus), Մորակտցար (Gallinago gallinago), Ճնճղուկ ավազակտցար (Calidris minuta), Ոտնացուպիկ (Himantopus himanto) - գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում խոցելի կարգավիճակով, Հայկական որոր

(Larus armenicus), Սովորական որոր (Larus ridibundus), Սպիտակաթև ջրածիծառ (Chlidonias leucopterus), Թխակապույտ աղավնի (Columba livia), Սովորական կկու (Cuculus conorus), Սև մագաղաթև ծիծեռնակ (Apus apus), Ոսկեգույն մեղվակեր (Merops apiaster),) Ներկարար (Coracias garrulus) - գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում խոցելի կարգավիճակով, Հոպոպ (Upupa epops), տափաստանային արտույտ (Melanocorypha calandra), Դաշտային արտույտ (Alauda arvensis), Փուփուլավոր արտույտ (Galerida cristata), Գյուղական ծիծեռնակ (Hirundo rustica), Սպիտակ խաղտտնիկ (Motacilla alba), Կապտափող սոխակ (Luscinia svecica), Սևուկ կարմրատուտ (Phoenicurus ochruros), Սևագլուխ քչքչան (Larus ichthyaetus), Պարող քարաթռչնակ Պարող քարաթռչնակ (Oenanthe isabelliina), Սովորական քարաթռչնակ (Oenanthe Oenanthe), Սև կեռնեխ (Turdus merula), Կապույտ քարակեռնեխ (Monticola solitarius), Ծնկլտան գեղգեղիկ (Phulloscopus collybitus), Մոխրագույն շահրիկ (Sylvia communis), Մեծ երաշտահավ (Parus major), Կորեկնուկ (Miliaria calandra),), Սովորական դրախտապան (Emberiza citronella), Ամուրիկ (Fringilla coelebs), Կանեփնուկ (Carduelis cannabina), Տնային ճնճղուկ (Passer domesticus), Սովորական սարյակ (Sturnus vulgaris), Սովորական ճայ (Corvus monedula), Սովորական կաչաղակ (Pica pica), Մոխրագույն ագռավ (Corvus corone):

Հարկ է նշել, որ բուն ուսումնասիրվող և հարակից տարածքնում ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներ չկան, ինչը բացատրվում է այդ տարածքի բնական էկոհամակարգերի խիստ փոփոխված, տեղանքը բավականին ուրբանիզացված և գյուղատնտեսական և արդյունաբերական նպատակներով օգտագործված լինելու հանգամանքով: Կան, սակայն, մի շարք կենդանատեսակներ, որոնք բավականաչափ հանդուրժող են մարդկային միջամտության նկատմամբ, և մնում են տեղում (օրինակ՝ նապաստակը, ոզնին և այլն): Բացի այդ, որոշ տեսակներ կարող են բավականաչափ հարմարվողական կենսակերպ վարել նոր պայմանների նկատմամբ (օրինակ՝ աղվեսը, կամ որոշ թռչնատեսակներ):

Այսպիսով, ուսումնասիրվող տեղամասում բացակայում են ինչպես հազվագյուտ էկոհամակարգեր, այնպես ել կենդանիների հազվագյուտ տեսակներ, որի հետ կապված դրանց պահպանության համար հատուկ միջոցառումներ չի նախատեսվում:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Հայաստանի Հանրապետությունում կենսաբազմազանության պահպանումը, հիմնականում, իրականացվում է Բնության հատուկ պահպանվող տարածքներում (ԲՀՊՏ) (պետական արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր, բնության հուշարձաններ), որտեղ կենտրոնացած է բուսական և կենդանական աշխարհի տեսակազմի մոտ (60-70)%-ը, ներառյալ հազվագյուտ, վտանգված, անհետացման եզրին հայտնված և էնդեմիկ տեսակների ճնշող մեծամասնությունը:

«Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N 967-Ն որոշման համաձայն գործունեության տարածքում և դրան հարակից տարածքներում բացակայում են երկրաբանական, ջրաերկրաբանական, ջրագրական, բնապատմական և կենսաբանական հուշարձանները:

Նույն որոշմանը համապատասխան Երևան քաղաքում նշվում է երկու բնության պահպանվող տարածք՝ «Անանուն» այունաձև բազալտներ (Երևան, Հրազդանի կիրճի ձախափնյա մասում, Սբ. Սարգիս եկեղեցու մոտ), «Անանուն» այունաձև բազալտներ (Երևան, Հրազդանի կիրճի ձախափնյա մասում մանկական ե/գ տանող թունելի արմ ճակատամուտքի մոտ):

Պատմամշակույթային հուշարձանների ցանկը

Երևանի Դավթաշեն վարչական շրջանի պատմամշակութային անշարժ հուշարձանները ներկայացված են ստորև՝ աղյուսակի միջոցով:

	Անվանում	Ժամանակաշրջան	Վայր	ՇԿ	ՐԿ	Տեսակ	Հեղինակ / Տվյալներ	Նշումներ	Լուսանկար
	Աղյուսակ-հուշարձան՝ Երկրորդ աշխարհամարտում զոհված դավթաշենցիներին	1965 թ.	Դավթաշենի 10-րդ փողոց		.4/1		Ճարտ. Հ. Ասլանյան	—	Վերբեռնել
	Քարայր-կացարան «Քանաքեռ-7»	Միջնադար	Հրազդանի աջ ափին		.4/2		—	Հրվանդանի լանջին. Արաբկիր և Դավթաշեն վարչական շրջանների սահմանների ճշտման արդյունքում հուշարձանը «1.3 Արաբկիր» թաղից տեղափոխվել է և ներառվել Դավթաշենի պետական ցուցակում	Վերբեռնել
	Քարայր-կացարան «Քանաքեռ-8»	Միջնադար	Հրազդանի աջ ափին		.4/3		—	Քանաքեռ ՀԷԿ-ից 50 մ հս. Արաբկիր և Դավթաշեն վարչական շրջանների սահմանների ճշտման արդյունքու	Վերբեռնել

								մ հուշարձան ը «1.3 Արաբկիր» թաղից տեղափոխ վել է և ներառվել Դավթաշեն ի պետական ցուցակում	

Ուսումնասիրվող հողատարածքին մոտ կամ հարակից տարածքներում պատմամշակութային հուշարձաններ չեն դիտարկվում:

ԱԶԴԱԿԻՐ ՀԱՄԱՅՆՔԸ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Երևանի ընդհանուր բնակչությունը, ըստ 2022 թվականի մարդահամարի, կազմում է 1 086 677 մարդ, իսկ քաղաքային տարածքն կազմում է 223 կմ²՝ միջին խտությամբ մոտ 4 873 մարդ/կմ: Դավթաշեն վարչական շրջանը, որը կազմում է մոտ 6.47 կմ, ունի 43 704 բնակիչ, ինչը կազմում է քաղաքային ընդհանուր բնակչության շուրջ 4.02 տոկոսը, և բնակեցման խտությամբ կազմում է մոտ 6 760 մարդ/կմ² :

Դավթաշենը վարչական կառավարման տեսանկյունից սահմանակից է Աջափնյակին և Արաբկիրին, իսկ արտաքին սահմանով՝ Կոտայքի մարզի հետ: Այդ վարչական շրջանում բնակչության գերակշռող մասն է կազմում հայերեն խոսող ազգությամբ բնակչությունը: Վարչական ղեկավարի աշխատակազմը պատասխանատու է տեղական խնդիրների լուծման համար, իսկ վարչական ենթակառուցվածքի համար տրամադրված է 652 հա տարածք, որտեղ գտնվում են 1 650 առանձնատներ և շուրջ 195 բազմաբնակարանային բնակելի շենքերը :

Վարչական շրջանում գործում են մոտ 300 մանր-չափի առևտրային խանութներ, սննդի կետեր և ծառայությունների օբյեկտներ: Օգտագործման առումով կարևոր է նաև “Արաքս” մետաղաշինարարական գործարանը, որը

գործում է 1984 թվականից և համարվում է տարածաշրջանի արդյունաբերական նշանակության օբյեկտներից մեկը ։

Կրթության ոլորտում 2017 թվականի տվյալների համաձայն, Դավթաշենում գործում են հինգ մանկապարտեզ, հանրակրթական դպրոց և ՀՀ արդարադատության նախարարության ակադեմիան, որը բացվել է 2014 թվականին ։ Մշակույթի ոլորտում վարչական շրջանում տեղակայված են Գրադարան № 40 (1996 թվականին հիմնադրվել է), Ա. Տերթերյանի անվան արվեստի դպրոց (1993 թվականից)։ Նույն շրջանում պահվում է նաև հանրային այգի՝ մեծ խաչքարով, ինչպես նաև «Արմենֆիլմ» կինոստուդիան և «Armenia TV»-ը ։

Դավթաշենը նաև տրանսպորտային կարևոր հանգույց է։ Տարածքը կապ է ստեղծում Երևանի կենտրոնի հետ՝ Դավթաշենի կամրջի միջոցով, որն բացվել է 2000 թվականին։

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախատեսվող գործունեության ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները գնահատվում նոր ֆուտբոլի դպրոցի կառուցման գործողությունների ընթացքում, սակայն ազդեությունները կլինեն ժամանակավոր՝ հաշվի առնելով շին. աշխատանքների ժամանակավոր բնույթը և տեղայնացվածությունը:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նախատեսվող գործունեության իրականցման տարածքներում /ազդեցության գոտում/ լանշաֆտի, բուսական ու կենդանական տեսակների, հողային և ջրային ռեսուրսների վրա վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում: Նախատեսված շինարարական աշխատանքների ազդեցությունը բնական լանդշաֆտների վրա կլինի նվազագույն՝ կրելով սահմանափակ և կարճատև բնույթ: Դրանք հնարավոր է կանխել կամ նվազեցնել շինարարական լավ պրակտիկայի արդյունքում:

Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում ակնկալվում են հետևյալ հիմնական դրական ազդեցությունները.

- ուսումնական պայմանների և տեղանքում ապրող երեխաների ապլերակերպի բարելավում,
- սպրոտային նոր համալիրի առկայություն և հարակից տարածքի բարեկարգում՝ խթանելով նաև առողջ ապրելակերպի զարգացմանը,
- բարեկարգված և կանաչապատված տարածքի կայուն օգտագործում և պահպանություն:

<u>Օդային ավազանի աղտոտում</u>

Ծրագրի ընթացքում հիմնականում կանխատեսվում են անօրգանական փոշու ժամանակավոր արտանետումներ հողային աշխատանքների ընթացքում, ինչպես նաև շինարարական աշխատանքներում ներգրավվող տեխնիկայի՝ ներքին այրման շարժիչներից եկող արտանետումները՝ ածխածնի մոնօքսիդ,

ածխաջրածիններ և ազոտի երկօքսիդ[2]: Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները կլինեն տեղայնացված, ենթակա արագ ցրման և ժամանակավոր՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների ժամանակավոր բնույթը: Կանխատեսվում է, որ նշված արտանետումները չեն գերազանցի ՀՀ թույլատրված նորմերը, իսկ մթնոլորտային ավազանում դրանց հնարավոր տարածումը և շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունները կկանխարգելվեն և/կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացմամբ, մասնավորապես.

- ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով.
- շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվանալ.
- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով.
- օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը, բացառությամբ վերանորոգվող և վերակառուցվող փողոցների, օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս.
- հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ.
- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով.
- շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով:

Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն

Ջրօգտագործում

Շինարարության փուլում ջուրն օգտագործվելու է աշխատողների խմելու, տնտեսա-կենցաղային կարիքների, տարածքի ջրցանի, հողի (գրունտի) խոնավացման և անհրաժեշտության դեպքում հրդեհաշիջման համար:

[2] Հնարավոր արտանետումների հաշվարկները ներկայացված են որպես Հավելված:

Շինարարության համար պահանջվող ժամանակավոր խմելու ջուրը վերցվելու է տարածքին կից ջրագծից, որի վրա համապատասխան հորում տեղադրվելու է եռաբաշխիչ և հաշվիչ: Ջրագիծը սպասարկվում է «Վեոլիա Ջուր» ընկերության կողմից:

Ջրցանի համար տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով: Պայմանագիրը կկնքվի Կապալառու կազմակերպության կողմից տեխնիկական ջուր մատակարարող կազմակերպության կամ անձի հետ, որն ունի համապատասխան լիցենզիա: Պայմանագրում կհստակեցվի նաև ջրառի կետը: Տեխնիկական ջուրը լցվելու է տարածքում տեղադրվող 5տ տարողության բաքի մեջ: Ջրի մատակարարման հաճախականությունը կատարվելու է ըստ կարիքի: Տեխնիկական ջուրն ըստ անհրաժեշտության օգտագործվելու է հրդեհամարման, ջրցանի և անիվների լվացման համար:

Ջրցանի ջրի հաշվարկ (ճշգրտված)

$M_1 = S_1 \times K_1 \times T$

$S_1 = 54\,030$ մ²

$K_1 = 0.0015$ մ³/օր/մ²

$T = 730$ օր

$M_1 = 54\,030 \times 0.0015 \times 730 = 59\,162.85$ մ³ (ընդհանուր ծախս՝ 730 օրում).

Միջին (օրվա) ծախսը՝

59 162.85 / 730 = 81.045 մ³/օր

Միջին (ժամ)-ային ծախսը՝

81.045 / 24 = 3.3769 մ³/ժամ

Շինանձնակազմի կենցաղային ու տնտեսական ջրածախս

$W = (n \times N + n_1 \times N_1) \times T$

$n = 7$, $N = 0.016$ մ³/օր/մարդ

$n_1 = 127$, $N_1 = 0.025$ մ³/օր/մարդ

$T = 730$ օր

W = (7×0.016 + 127×0.025) × 730 = 2 399.51 մ³ (ընդհանուր՝ 730 օրում)

Օրական միջինը՝ 2 399.51 / 730 = 3.287 м³/օր

Ժամային միջինը՝ 3.287 / 24 = 0.13695 մ³/ժամ

Ընդհանուր ծավալը ողջ ժամանակահատվածում = M_1 + W = 59 162.85 + 2 399.51 = 61 562.36 մ³ (730 օրում)

Օրական միջին ընդհանուր = 61 562.36 / 730 = 84.332 մ³/օր

Ժամային միջին ընդհանուր = 84.332 / 24 = 3.5138 մ³/ժամ

Կեղտաջրերի հեռացում. շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տեղադրվող սանհանգույցից՝ բիոզուգարանից: Բիոզուգարանի մաքրումը կատարվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շահագործման փուլում դպրոցի ջրամատակարարման համակարգը միանալու է քաղաքային ջրագծին: Իսկ ջրահեռացման համար նախատեսվում է միացում քաղաքային կոյուղատարին: Տեխնիկական պայմանները կցված են:

Շահագործման փուլում հրդեհաշիջման համար պահանջվող ջրի ելքը հաշվարկվել է համաձայն «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» ՀՀՇՆ.40-01.01-2014 նորմերի:

<u>Թափոնների առաջացում և կառավարում</u>

Շինարարական գործընթացում կստեղծվեն թափոններ հետևյալ փուլերում՝

- Քանդման աշխատանքներ- բետոնային, մետաղական, փայտյա, պլաստիկ նյութեր:
- Հողային աշխատանքներ – հանույթ, կտրում, հարթեցում (հողային զանգվածներ, քարախառն հող):
- Շինարարական աշխատանքներ– բետոնային, մետաղական, փայտյա, պլաստիկ և մեկուսիչ նյութերի մնացորդներ:
- Հարդարման աշխատանքներ – ներկանյութերի, լուծիչների և փաթեթավորման թափոններ:

- Տեխնիկական սպասարկում – յուղեր, ֆիլտրեր, խառնուրդների տարաներ, լցոնանյութեր:

Կառուցապատման ժամանակ կատարվելու է 13327.33 մ³ ծավալի հողային աշխատանքներ՝ հանույթ, որից ետ լիցք՝ 3538,1 մ³: Ավելացած 9788,9մ³ ծավալով հողային զանգվածն հեռացվելու շին հրապարակից:

Քանդման արդյունքում առաջանալու են տարբեր տեսակի թափոններ, խիստ մոտարկված հաշվարկներով մոտ 19882.0մ³ շինաղբի տեսքով, ինչպես նաև շինարարական տարբեր նյութեր՝ փայտ, պատուհաններ, մետաղական մասեր, քար և այլն: Քանդման արդյունքում առաջացող թափոնները տարանջատվելու են և կուտակվելու են առանձին: Օգտագործման համար պիտանի թափոնները կենթարկվեն երկրորդային օգտագործման, իսկ մնացածը տեսակավորվելու են, հանձնվելու են համապատասխան մասնագիտական կազմակերպություններին կամ տեղափոխվելու են աղբավայր:

Ընդհանուր շինարարական աղբի ծավալը գնահատում է մոտ 19882.0մ³: Շինարարական աղբի ամբողջ ծավալի հեռացումն ու տեղադրումը կիրականացվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Մեծամորի համայնքապետարանի հետ համաձայնեցված վայրում, որի վերաբերյալ համաձայնությունը նախատեսվում է ձեռք բերել մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը:

Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության (այդ թվում ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N342-Ն հրամանի, շինարարական աշխատանքների ընթացքում, մասնավորապես՝ նոր կրթահամալիրի շենքի կառուցման և տարածքի բարեկարգման աշխատանքների ընթացքում գնահատվում են ստորև ներկայացվող կազմով թափոնների առաջացում.

Թափոնի անվանում	Ծածկագիր	Վտանգավորության դաս	Քանակ

Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ/բացառությամբ խոշոր եզրաչափերի	91200400 01 00 4	IV	մոտ 3 տ
Շենքերի քանդումից առաջացած շինարարական աղբ	91200601 01 00 4	IV	19882.0 խ.մ
Եռակցման խարամ	31404800 01 99 4	IV	մոտ 0,01 տ
Ջրի պարզեցման շլամներ	94300100 04 00 4	IV	մոտ 0,3 տ
Օգտագործված փաթեթավորման նյութեր (պոլիէթիլեն, ստվարաթուղթ, փայտ)	91200800 01 00 4	IV	մոտ 0,5 տ
Օգտագործված լաքեր, ներկեր և դրանց տարաներ	31404600 01 99 3	III	մոտ 0,02 տ
Օգտագործված քսայուղեր և յուղային ֆիլտրեր	54100200 01 00 3	III	մոտ 0,02 տ
Մետաղյա թափոններ	35100100 01 00 4	IV	Մոտ 1,0 տ

Շինարարական աղբի փաստացի քանակի որոշումը և ծավալաթերթով նախատեսված վճարումը հնարավոր է իրականացնել տեղամասի տեխնիկական հսկողություն իրականացնող ինժեների և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպության համաձայնությամբ:

Շինհրապարակում տեղադրվելու են փակ տարաներ և պոլիէթիլենային պարկեր՝ թափոնների տեսակավորված հավաքման համար: Վտանգավոր թափոնները (օգտագործված յուղեր, ներկանյութեր, լուծիչներ) պետք է պահվեն անջրաթափանց տարաներում, ստվերավորված և փակ տարածքում՝ մակնշմամբ: Մեխանիզմների և սարքավորումների սպասարկումը իրականացվելու է մասնագիտացված ավտոտեխսպասարկման կայաններում՝ խուսափելով շինարարական տարածքում վտանգավոր թափոնների կուտակումից և պահումից: Կենցաղային թափոնների տեղափոխումն կիրականացվի համայնքի կողմից սահմանված կարգով՝ գործող աղբավայր:

Կենցաղային աղբը, որի ընդհանուր քանակը գործունեության ողջ ընթացքում կանխատեսվում է մոտ 3տ, կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Աղմուկի և թրթռումների ազդեցություն

Աղմուկի համեմատաբար բարձր մակարդակները գնահատվում են շին. աշխատանքների ընթացքում օգտագործվող մեքենա-մեխանիզմների շահագործումից, որոնք նախատեսվում է շահագրծել բացառապես աղմկակլանիչների և խլացուցիչների առկայության դեպքում: Բացի այդ հիմնականում աղմուկ առաջացնող գործողությունները կիրականացվեն միայն օրվա ցերեկային ժամերին, այն է՝ ժամը 9:00- ից մինչև առավելագույնը ժամը 18:00:

Աղմուկի մակարդակի նվազումը ըստ հեռավորության կարելի է հաշվարկել հետևյալ բանաձևով

L2=L1–20∗log10(r2/r1)

Որտեղ՝

L1-ը ձայնի մակարդակն է աղբյուրից r1 մետր հեռավորության վրա

L2-ը վերջնական ձայնի մակարդակն է աղբյուրից r2 հեռավորության վրա

Աղմուկի ամենաբարձր և հիմանական աղբյուր հանդիսանում է էքսկավատորի աշխատանքը: Որի 1 մետր հեռավորության վրա աղմուկի առավելագույն մակարդակը կազմում է 78 dB:

Կատարվող հաշվարկը աղբյուրից 50 մ հեռավորության համար: Տարածքից 50 մետր հեռավորության վրա է գտնվում բնակելի տուն:

Հաշվարկը կատարվել է վատագույն սցենարառվ, ենթադրելով, որ չկա աղմուկը խլացնող որևէ պատնեշ:

L2=78–20·log10(50/1)

L2=78–20·log10(50)

L2=78–20· 1.69897

L2≈78– 33.9794≈ 44.0206 dB

Էքսկավատորի աշխատանքից 50 մետր հեռավորության վրա աղմուկի մակարդակը կլինի ոչ ավել քան 44.0206 dB

Հաշվարկներով ստացված արդյունքները չեն հակասում «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ հրամանին:

Աշխատանքները կատարվելու են ցերեկային ժամերին:

Շինարարական գործողությունների ընթացքում թրթռումների ազդեցություններ հարևան ազդակիրների վրա չեն կանխատեսվում:

Շինարարական աշխատանքների ընթացքում կապալառուն պարտավոր է հետևել ՀՀ թրթռումների գործող նորմերը, քանի որ ծրագրի շրջանակում հարակից կառույցների վրա հասցրված ցանկացած ֆիզիկական վնասը պետք է վերացվի կամ փոխհատուցվի կապալառու ընկերության սեփական միջոցների հաշվին:

Աղմուկի և թրթռումների մակարդակների կառավարմանն ուղղված մեղմացնող միջոցառումներն առավել մանրամասը ներկայացված են ԲԿՊ-ում: Ծախսերի արդյունավետության տեսանկյունից նպատակահարմար է համարվել աղմուկի և թրթռումների մակարդակների գործիքային չափագրումներ իրականացնել միայն բողոքների դեպքում:

Ազդեցություն պատմամշակութային հուշարձանների վրա

Հողային աշխատանքների ընթացքում պատահական գտածոյի (շարժական կամ անշարժ) անսպասելի հայտնաբերման դեպքում, համաձայն ՀՀ «Պատմության և մշակութային անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքի (1998թ.) և ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի ընթացակարգերի, աշխատանքները կդադարեցվեն և շինարար կապալառուն կտեղակացնի Պատվիրատուին, վերջինս էլ՝ լիազոր մարմնին:

Աշխատանքի անվտանգություն

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում մեծ ուշադրություն է դարձվելու աշխատանքային անվտանգության ապահովման հարցերին, որի համար նախատեսված են մի շարք միջոցառումներ հնարավոր ազդեցությունները և անհարմարությունները բացառելու կամ մեղմացնելու նպատակով:

Շինհրապարակում առողջության և աշխատանքային անվտանգությանն ուղղված կանոնները/միջոցառումները կիրականացվեն կապալառուի կողմից՝ համաձայն ԲԿՊ-ում նկարագրված ընթացակարգի, որոնք համալիր ներկայացված են ԲԿՊ-ի «Առողջության և աշխատանքի անվտանգության պլան», ինչպես նաև «Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան» ենթաբաժիններում:

Շինարարական աշխատանքների ընթացքում խստորեն կպահպանվեն անվտանգության և հակահրդեհային միջոցառումները, մասնավորապես.

- Նախքան աշխատանքի սկսելը կկատարվի շինհրապարակի ժամանակավոր ցանկապատում և կտեղադրվեն մուտքը արգելող ցուցափեղկեր/նշաններ:
- Շինարարությունում շահագործվող կռունկը պետք է անցած լինի անվտանգության տեխնիկայի փորձաքննության և գրանցված լինի, «Տեխնիկայի անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի ռեգիստրում:
- Հակահրդեհային անվտանգությունը շինհրապարակում, աշխատատեղում և աշխատանքի տեղամասերում անհրաժեշտ է ապահովել համապատասխան «Հակահրդեհային անվտանգության կանոններ» պահանջներին համապատասխան, ապահովել կրակմարիչի առկայությունը և հրդեհային անվտանգության վերաբերյալ պաստառներև այլն:
- Մինչև աշխատանքների սկսելը աշխատողներին պետք է հրահանգավորել անվտանգության տեխնիկայի մասին: Բանվորների աշխատանքների պաշտպանությունը պետք է ապահովվի վարչակազմի կողմից, նրանց

անհատական պաշտպանական միջոցներ տրամադրմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ, սաղավարտ և այլն)։

- Տանիքի և բարձրության վրա աշխատանքերի իրականացման ժամանակ, աշխատանքներն անհրաժեշտ է կատարել անվտանգության գոտիների օգտագործմամբ, որոնք պետք է ամրացվեն կոնստրուկտիվ ճշտված և հուսալի էլեմենտից։
- Եռակցման աշխատանքներ իրականացնելիս անհրաժեշտ է հետևել, որպեսզի էլեկտրա և գազաեռակցված սարքերը գտնվեն ճանապարհներից և անցումներից մի կողմ և էլեկտրաեռացման սարքը և եռակցվող նյութը լինեն հողանցված։
- Խտացված գազով բալոնները պետք է տեղափոխել միայն հատուկ պատգարակի միջոցով։ Բալոնին չի թույլատրվում մոտենալ յուղոտված հագուստով, արգելվում է նաև բալոնների մոտակայքում ծխելը։
- Արգելվում է տանիքում աշխատանքներն իրականացնելը, մշուշի, ամպրոպի և քամու 6 բալ արագությամբ գերազանցման դեպքում։
- Անվտանգության անհատական մոտեցումներ կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին-մոնտաժային աշխատանքների հետ (օրինակ՝ բեռի տեղափոխումը գոյություն ունեցող շենքերի տանիքի վրայով)։

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

N	Պարամետրեր	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները
1.	Օդային ավազան	✓ շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում՝ գրունտի խոնավեցում և ճանապարհների ջրցան, ✓ օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը, բացառությամբ վերանորոգվող և վերակառուցվող փողոցների, օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս ✓ շինհրապարակը ցանկապատվելու է, կառուցվող շենքերը կծածկվեն շինարարությանը համապատասխան բարձրությամբ 180 գրամ/քմ խտությամբ ցանցով/թաղանթով, ✓ շինարարության ողջ ընթացքում Կառուցապատողը շինարարական հրապարակի տարածքում պետք է ապահովի օդի որակի մոնիթորինգի սարքավորումների տեղադրումը՝ առցանց հարթակի հասանելիությամբ, համայնքի կողմից տվյալների ստուգաչափման հնարավորությամբ, որի տեխնիկական չափորոշիչները և հասանելիության պայմանները սահմանվում են Երևանի քաղաքապետի որոշմամբ, ✓ մեքենաները շին. հրապարակ մտնելու և դուրս են գալու մաքուր վիճակում՝ անվադողերի մաքրումից հետո, ✓ գործունեության վայր շինանյութերի և սորուն նյութերը, ինչպես նաև շինարարական աղբը կամ նյութերը տեղափոխվելու են փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով, ✓ ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով, ✓ բացառվելու է տարածքում թափոնների բաց այրումը, ✓ օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում, զտիչներ են տեղադրվելու արտանետման խողովակների վրա: ✓ բացառվելու է անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը: ✓ հղկման աշխատանքները կատարվելու են փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ ✓ շինարարական աղբը տեղափոխվելու է դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով:
2.	Աղմուկ և թրթռում	✓ շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպվելու է ցերեկային ժամերին, ✓ կառուցապատման տարածքում ձայնակլանիչ նյութերի և կոնստրուկցիաների կիրառում, ✓ շինարարական աշխատանքներում ներգրավվելու են ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ✓ տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործել սարքին վիճակում,

		✓ պարբերաբար կստուգվեն և կկարգաբերվեն տրանսպորտային միջոցների շարժիչները, ✓ բացառել շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ, ✓ օգտագործվող շին տեխնիկան և մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով, ✓ պահպանել աղմուկի, վիբրացիայի, արտանետվող գազերի թույլատրելի նորմերը, ✓ շինհրապարակում աղմուկի մակարդակը գերազանցելու դեպքում աշխատողներին ապահովել ականջակալներով:
3.	Ջրային ռեսուրսներ	✓ փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր, ✓ անձրևաջրերը և շինարարական հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող հոր, ✓ ջրցանման համար կօգտագործվի միայն տեխնիկական որակի ջուր, ✓ տեխնիկական ջուրը կմատակարարվի ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով, որը կկնքվի շինարարության սկզբում, ✓ շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կետերում, ✓ շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում՝ բետոնախառնիչ մեքենաներով, ✓ բետոնանյութի լցվածությունն ապահովել այնպես, որպեսի բետոնանյութը տեղափոխման ժամանակ չթափվի ճանապարհներին՝ երթեկությանը չխոչընդոտելու և ասֆալտածածկը չվնասելու համար, ✓ ստորգետնյա կոնստրուկցիաները ջրամեկուսացնելու նպատակով օգտագործվող ջրամեկուսիչ նյութերը պետք է համապատասխանեն համապատասխան չափորոշիչներին՝ գրունտային ջրերի հետ շփման արդյունքում վտանգավոր նյութեր վերջինիս մեջ չներթափանցելու նպատակով, ✓ օգտագործվող ջրամեկուսիչ նյութերը չպետք է պարունակեն սնդիկ պարունակող կամ այլ քայքայիչ նյութեր: ✓ շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող սանհանգույցից՝ բիոզուգարանից, ✓ շինարարական հոսքաջրերի համար կառուցվելու է ժամանակավոր սեպտիկ հոր, ✓ բիոզուգարանի և սեպտիկ հորի մաքրումը կատարվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով, ✓ շինաշխատանքների ավարտից հետո բիոզուգարանը ապամոնտաժվելու է:
4.	Հողային ռեսուրսներ	✓ քանդվող գրունտը մասամբ կուտակվելու է փոսորակից դուրս ետլիցքի համար, ✓ հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահվելու է շինհրպարակում, առանձնացված վայրում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով, ✓ շինարարական աշխատանքների ընթացքում հանված հողային գրունտը մասնակի օգտագործվելու է տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով, իսկ մնացածը տեղափոխվելու է դրա համար նախատեսված աղբավայր, ✓ շինհրապարակն ապահովված կլինի արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար,

		✓ շինարարական նյութերը կտեղադրվեն հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա, ✓ նվազագույնի է հասցվելու շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը, ✓ շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կկատարվի տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում, ✓ այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար տեղադրվելու է ավազ կամ մանրախիճ, ✓ մեքենաներից և սարքավորումներից վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսքի դեպքում, փռված ավազը կամ մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր, այն փոխարինելով նորով, ✓ մեքենաների անիվների լվացումը կատարել անիվների լվացման հարթակում, ✓ բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը կատարել մինչև վերջիններիս շինհրապարակից դուրս գալը:
5.	Պատմամշակութայ ին հուշարձաններ	✓ շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցնել, ✓ տեղեկացնել համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար, ✓ շինարարական աշխատանքները շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:
6.	Թափոններ	✓ շինարարական աշխատանքների ժամանակ գործունեության տարածքը և շրջակա միջավայրը զերծ պահել թափոնների կուտակումներից, ✓ հնարավորության դեպքում առանձին թափոններն օգտագործվելու են շինարարության փուլում, ✓ շին հրապարակի տարածքում կհստակեցվի շին աղբի նախնական կուտակման վայրը, ✓ շինարարական թափոնները՝ շին.աղբ, բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն, կհավաքվեն անջրթափանց պոլիէթելենային պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր, ✓ կառուցապատման փուլում կենցաղային աղբը կուտակվելու է պլաստիկ աղբահավաք տարողությունների մեջ, ✓ կենցաղային աղբի հեռացումը կատարվելու է կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով, ✓ շինաղբի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկով ապահովված բեռնատարներով կամ բեռնատարները ծածկվելու են անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով, ✓ բացառել աղբի կուտակումը շիհրապարակից դուրս՝ այլ բնակելի և հասարակական տարածքներում, ✓ շինարարական աշխատանքների ավարտից հետո շինարարական նյութերի մնացորդները, վտանգավոր նյութերը/սոսինձի, ներկի մնացորդներ/ և այլն հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են Կապալառուի կողմից:
7.	Արտակարգ իրավիճակների	✓ մինչ աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը: ✓ մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են

	պատրաստվածությունը	հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու առաջին օգնության-արկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում: ✓ բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: ✓ հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը: ✓ իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում ղեկավարվել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով: ✓ կառույցների հիմքերի փոսորակները բացելուց և նախագծային նիշերին հասնելուց հետո՝ պարտադիր է ինժեներ-երկրաբանի կողմից հիմնափոսի զննումը և համապատասխան մասնագետի (երկրաբան) կողմից կազմված եզրակացությունը, ✓ կտեղադրվեն տեղեկատվական ցուցանակներ, որը ներառելու է շենքի նախագծողի, կապալառուի և այլ պատասխանատու անձանց (հեռախոսահամար), շինթույլտվության, շինարարության սկզբի և ավարտի վերաբերյալ տեղեկատվություն, ✓ շինհրապարակը կկազմակերպվի հակահրդեհային անվտանգության պաշտպանության կանոններին համապատասխան, տեղադրվելու է ջրի բաք՝ հրդեհամարման նպատակով, ✓ շինհրապարակն ապահովված է լինելու հակահրդեհային կրակմարիչներով, տեսահսկման և ազդանշանային համակարգերով, հակահրդեհային միջոցառումների վահանակներով, ✓ շինհրապարակն, ինչպես նաև բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունները պարբերաբար կմաքրվեն հրդեհավտանգ և պայթունավտանգ թափոններից և աղբից, ✓ հակահրդեհային միջտարածությունները չօգտագործել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար, ✓ բաց են լինելու նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները, տեղադրվելու են դրանց մոտեցման համապատասխան ցուցանակներ, ✓ տեղադրվելու են հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ՝ վթարների կանխարգելման համար, ✓ հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար: ✓ մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են:
8.	Մարդու առողջություն,	✓ պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, շինհրապարակում՝ անվտանգության տեխնիկայի կանոնները, անցումները, վտանգավոր զոնանները կցանկապատվեն, ՀՀ Առողջապահության նախարարի 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2. 2.8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին

	աշխատանքի անվտանգություն	թիվ 15-Ն հրամանի պահանջները, ✓ ապահովել աշխատողների անվտանգությունը բարձրության վրա (համապատասխան արտահագուստի, բռնակների, բազրիքների, ամրագոտիների և սաղավարտների առկայություն), ✓ մինչև աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդներն անցնելու են հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների, ✓ բանվորական խմբերը լինելու են բազմապրոֆիլ և մասնագիտացված, անցկացվելու են ուսուցման և հրահանգավորման դասընթացներ, ✓ ստուգվելու են առասանիչ բանվորների գիտելիքները, տեղադրվելու են առասանման եղանակների և ձևերի նկարագրությամբ ցուցանակներ, ✓ աշխատողների համար ապահովել 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական և պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ, կոշիկ և այլն), էլեկտրական սարքավորումների հետ աշխատողները՝ դիէլեկտրիկ գորգով և ձեռնոցներով, ✓ ապահովել աշխատողների համար սանիտարական և հանգստի պայմաններով (հանգստի սենյակ, հանդերձարան, լվացարան և այլն)՝ անհրաժեշտ կահավորանքով (լվացարան, աթոռ, սեղան, ջեռուցիչ և այլն), ✓ շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրել աշխատանքային պայմանների, հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ՝ տեղեկատվական և հակահրդեհային վահանակներ, վտանգն ազդարարող տեսողական պաստառներ, ճանապարհային երթևեկության, ինչպես նաև կողմնակի մարդկանց մուտքն արգելող նշաններ, ✓ վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը, բացառել գործունեության վայրում խոտանված բեռնիչ սարքերի կուտակումները, ✓ վերահսկել մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառել մեքենաների կուտակումները, ✓ նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը՝ հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով, ✓ բացառել ավտոամբարձիչի սլաքի աշխատանքը՝ սահմանազատված սահմանից դուրս, ✓ բացառել բեռի ամբարձիչից կախված մնալը ամբարձիչից աշխատանքի դադարի ժամանակ, ✓ բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ օգտագործվող բեռնամբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին, ✓ երթևեկության արագությունը շինհրապարակում չպետք է գերազանցի 5կմ/ժ, ✓ տեղադրել լրացուցիչ լուսավորման սարքեր՝ շինհրապարակի լուսավորության համար, ✓ շինհրապարակի լուսավորությունը ապահովել հավասարաչափ՝ լուսավորության 2 լյուքսից ոչ պակաս, ✓ շենքի ներսում եռակցման և ներկման աշխատանքները կատարել օդափոխության պայմաններում, կատարել հոսանքատար մասերի մեկուսացում, ✓ վարել տեխնիկական հսկողության ամփոփիչ և անհատական մատյաններ՝ տեխնիկական վերահսկողության

		իրականացման համար, ✓ շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացնել 2020թ. հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության պահանջներին համապատասխան, աշխատողներն ունենալու են համապատասխան բանվորական արտահագուստ:
9.	Սոցիալական ազդեցություններ	✓ հանրության իրազեկում՝ շինարարական աշխատանքների սկզբի, ավարտի, շինհրապարակի ձևավորման վերաբերյալ, ✓ շինհրապարակի հարակից տարածքներում մուտքերի ապահովում երթևեկելի գոտիներում, ✓ թափոնների և շինարարկան աղբի երկարատև կուտակումների բացառում՝ ելնելով «Թափոնների մասին» օրենքից և առաջնորդվելով այլ իրավական ակտերի պահանջներով, ✓ ապահովել հարակից տարածքների ծառաթփային բուսականության խնամքը և այլն, ✓ երեկոյան ու գիշերային ժամերին աղմուկ առաջացնող աշխատանքների դադարեցում, ✓ Տարածքում նախատեսել անվտանգության, բնապահպանության և սոցիալական հարցերի կարգավորման պատասխանատուներ:
10.	Բարեկարգում և Կանաչապատում	✓ ոռոգման համակարգի անցկացում, ✓ համաձայն կանաչապատման նախագծի համարակալված ցուցափայտերի օգնությամբ ծառերի ու թփերի փոսերի տեղի նշահարում, ✓ ծառերի համար 1մ խորությամբ և 50սմ լայնության փոսերի պատրաստում, ✓ թփերի համար 50-60սմ խորությամբ և 40սմ լայնության փոսերի պատրաստում, ✓ բոլոր փոսերի մոտ համարժեք ծավալի հողախառնուրդի կուտակում. պատրաստված 3 բաժին սևահողից, 1 բաժին կարմիր ավազից, 1 բաժին տորֆահողից և 0.5 բաժին փտած գոմաղբից, վրան ավելացնել մուլչ: ✓ ագրոտեխնիկական միջոցառումների ավարտից հետո խորհուրդ է տրվում նշված տարածքում ծառատունկն իրականացնել ուշ աշնանը կամ վաղ գարնանը: Տնկանյութը ծառերի դեպքում պետք է լինի առնվազն 2.0մ, թփերի դեպքում՝ առնվազն 0,8մ, պատնեշային թփերի (տոսախ) դեպքում՝ առնվազն 0,5մ: ✓ տնկանյութը կարելի է ձեռք բերել անտառային և դեկորատիվ տնկարաններից: ✓ ծառատնկման հաջորդ 3 տարիներին խորհուրդ է տրվում վեգետացիայի ընթացքում 2-3 անգամ իրականացնել խնամքի (քաղհան, փխրեցում) աշխատանքներ, անհրաժեշտության դեպքում նաև վնասատուների նկատմամբ թունաքիմիկատներով կամ կենսաբանական պայքարի միջոցառումներ:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՊԼԱՆ

Վայրը/ Գործողությունը/ Փուլը	Մոնիտորինգի ենթակա պարամետրեր	Մոնիտորինգի կետեր	Մոնիտորինգի գործիքներ/ մեթոդներ	Բնապահպանական գործողությունների ցուցանիշ	Մոնիտորինգի հաճախականություն
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ					
1. Հանրային լսումներ և կապը հանրության հետ	Հանրության տեղեկացվածությունը շինարարության փուլերի վերաբերյալ: Հանրության ծանուցում շինարարության թույլտվության հատկացման և շինարարության մեկնարկի վերաբերյալ:	Ամբողջ շինարարական տեղամաս	Փաստաթղթերի ստուգումներ: Շինարարական տեղամասերի ստուգայցեր: Հանրային լսումների արձանագրություններ դիտարկումներ:	Հանրության ծանուցումը շինարարության թույլտվության հատկացման և շինարարության մեկնարկի վերաբերյալ իրականացվել է բոլոր պահանջվող ընթացակարգերին համապատասխան: Հանրային լսումները և հայտարարությունները շին աշխատանքները սկսելուց առաջ:	Շին աշխատանքների մեկնարկից առաջ
2. Շրջակա միջավայրի պահպանություն	Փոշու և այլ օդի աղտոտիչների (CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական չափաքանակների պարբերական վերահսկում: Ջրային և հողային ռեսուրսների որակի ուսումնասիրությունների կատարում: Կեղտաջրերի հեռացման՝ բիոզուգարանի տեղադրում: Աղմուկի և թրթռումների մակարդակի բարձրացման դեմ ուղղված միջոցառումներ:	Բոլոր շին տեղամասեր: Շինհրապարակից 50 մ հեռավորության վրա գտնվող փոշու, աղմուկի, թրթռումների զգայուն ընկալիչներ: Շինարարական հրապարակի տարածքում օդի	Ակնադիտական ստուգումներ շին. հրապարակի ստուգայցերի միջոցով: Բողոքների գրանցամատյանի գրառումների ստուգում: Փոշու, աղմուկի, թրթռումների մակարդակների գործիքային ստուգում	Գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու դրանց կարգավիճակը: Փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակը գտնվում է ՀՀ գործող նորմերի սահմաններում: Օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը, բացառությամբ	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան

		որակի մոնիտորինգի սարքավորումներ:	և վերլուծություն: Օդի որակի մոնիտորինգի սարքավորումներով չափման ստուգում:	վերանորոգվող և վերակառուցվող փողոցների, օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս: Օդի որակի չափագրումներ առցանց հարթակի առկայությամբ:	
3. Կենսաբազմազանության պահպանություն	Շինարարության ընթացքում տարածքի պարբերական դիտարկումներ՝ համոզվելու համար, որ նոր արժեքավոր տեսակներ չեն հայտնվել: Անսպասելի հայտնված արժեքավոր տեսակների կամ բնապահպանական ռիսկերի դեպքում ապահովել համապատասխան մասնագիտական արձագանք՝ խորհրդատվություն, գործողությունների դադարեցում կամ հարմարեցում:	Բոլոր շին տեղամասեր:	Ակնադիտական ստուգումներ շին. հրապարակի ստուգայցերի միջոցով:	Տարածքում առկա փաստաթղթավորված կենսատեսակների փոփոխություն: Բացահատված նոր տեսակներ:	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
4. Շին աղբի և թափոնների տեղադրման վայրեր	Շին աղբի և թափոնների տեղադրման գտնվելու վայրը, հատակագիծը և կառավարումը: Թափոնների կանոնավոր տեղափոխում:	Բոլոր շինարարական տեղամասերը Շին աղբի և թափոնների տեղադրման վայրեր:	Փաստաթղթերի ստուգում: Շին աղբի և թափոնների տեղադրման վայրերի ստուգայցեր	Շին աղբի և թափոնների տեղադրման վայրի գտնվելու վայրը և հատակագիծը համապատասխանում են պետական մարմինների կողմից թույլատրվածին և Տարածքի կառավարման պլանին: Շին աղբը, կենցաղային աղբը և ոչ պիտանի և ավելցուկային նյութերի քանակները կառավարվում են	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան

				հրահանգներին համապատասխան և տեղադրվում են միայն թույլատրված վայրում: Թափոնների գրանցամատյանը մշակված է և պատշաճ վարվում է:	
5. Երթևեկության և մոտեցման ուղիների կառավարումը	Երթուղիների և մոտեցման ուղիների գտնվելու վայրերը: Հարևան բնակչությանը և հանրային վայրերի այցելուներին, աշխատակիցներին պատճառվող անհարմարությունները և անվտանգության հարցերը: Ճանապարհներին և այլ կառույցներին՝ հատկապես ջրահեռացման համակարգերին պատճառվող վնասներ:	Սարքավորումների և նյութերի տեղափոխության համար ճանապարհները: Շինհրապարակի մոտեցման մուտքերը	Փաստաթղթերի ստուգում Շինհրապարակ կատարած ստուգայցեր	Երթևեկության և մոտեցման ուղիների համապատասխանությունը մասնագրերին:	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
6. Շինհրապարակի վերականգնում, կանաչապատում և տարածքի բարեկարգում	Շինհրապարակի մաքրությունը, նյութերի և թափոնների հեռացվածությունը տարածքից: Բոլոր մակերեսների, այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքների վերականգվածությունը: Շինհրապարակի և շրջակա տարածքի բարեկարգվածությունը: Տարածքի կանաչապատման աշխատանքների համապատասխանությունը հաստատված «Տարածքի կանաչապատ գոտիների բարեկարգման նախագծին»: Կանաչ զանգվածի վիճակի՝ կպչողականությունը և ծառերի աճը:	Տեղամասեր կատարած ստուգայցեր	Շինհրապարակի վերականգնման, կանաչապատման և բուսականության վերականգնման աշխատանքների համապատասխանության ստուգում հաստատված «Կանաչապատման և բարեկարգման» նախագծին: Բոլոր մակերեսները այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են մինչև սկզբնական	Ամբողջ շին աղբը, նյութերի մնացորդները և սարքավորումները հեռացված են շինհրապարակից: Տարածքի կանաչապատման աշխատանքները, ծառերի/թփերի տնկման և վերատնկման վայրը և դրանց քանակը համապատասխանում են հաստատված «Տարածքի կանաչապատ գոտիների բարեկարգման նախագծին»: Ապահովված է ծառերի/թփերի 90% կպչողականությունը, հակառակ դեպքում դրանց փոխարինումը նորերով:	Շինարարական աշխատանքների ավարտին ստուգայցերի ժամանակացույցին համապատասխան

			վիճակը:		
ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ (ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ) ՓՈՒԼ					
11.Թերությունների վերացման աշխատանքներ	Աղմուկի, օդի աղտոտիչների և այլ բնապահպանական ազդեցություններ	Դպրոցի և հարակից տարածքի սահմաններում	Բողոքներ զգայուն ընկալիչների կողմից Օդի որակի մոնիտորինգի սարքավորումների գրանցած արդյունքներ	Բողոքների դեպքում՝ աղմուկի և թրթռումների, օդի որակի չափագրումներ՝ ստուգելու համար համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին Օդի որակի սարքավորումների գրանցած արդյունքների համապապատասխանության ստուգում ՀՀ օրենսդրական պահանջներին	Շահագործման փուլում ստուգայցերի ժամանակացույցին համապատասխան
12.Տարածքի բարեկարգում	Ծառերի/թփերի և այլ բուսականության աճ:	Բարեկարգման և կանաչապատման բոլոր տեղամասերը	Ստուգայցեր	Ծառերի/թփերի և խոտածածկույթի սանիտարական վիճակ:	Շահագործման փուլում ստուգայցերի ժամանակացույցին համապատասխան

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական Կլիմայաբանություն» ՀՀ շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ. սեպտեմբերի 26-ի N167-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին:
- Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованныхисточников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР1984, Москва.
- ԱԴԲ 2015: Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ:
- ՀՀ կառավարության որոշում N160-Ն, 2 փետրվար, 2006թ: Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին:
- Տեղեկագիր ՀՀ հիդրոօթերևութաբանության և շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքների մասին: Երևան: 2024թ 1-ին եռամսյակ: http://armmonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/texekanq/eramsjak/I-2024.pdf
- ՀՀ կառավարության որոշում 596-Ն, 2015: ՀՀ-ում «Կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին»:
- ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի N-1243- Ն հրաման, 2015թ: «Սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ և կարևոր նշանակության օբյեկտները սահմանելու մասին»:
- ՀՀ Օրենք Սեյսմիկ պաշտպանության մասին, 2002 թ:
- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի N 102-Ն հրաման, 2020թ: ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարության նախագծման նորմեր» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի փետրվարի 3-ի N 24-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Հավելված 1. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 15 մայիսի 2024 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Երևան, Դավթաշեն Անաստաս Միկոյան փողոց 111/7 հողամաս

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Փոխանակման պայմանագիր 12.06.2009թ. թիվ 3791, Երևանի քաղաքապետի որոշում 25.05.2009թ. թիվ 5149-Ա, Փոխանակման պայմանագիր 07.06.2007թ. թիվ 2387, Համայնքի ղեկավարի որոշում 07.10.2020թ. թիվ 3118-Ա, Համայնքի ղեկավարի որոշում 05/02/2024թ. N 421-Ա, Համայնքի ղեկավարի որոշում 25/03/2024թ. N 1143-Ա

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 01-004-0102-0043

Մակերեսի չափը (հա)՝ 5,225888

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 15052024-01-0116, գաղտնաբառ՝ 7ZUT28EBB6GV

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

էջ 1/2



5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ԼԻԼԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Շրջանցված պայմանը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 15052024-01-0116, գաղտնաբառ՝ 7ZUT28EBB6GV

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Կադաստրի կոմիտե

էջ 2/2

Հավելված 2. Ճարտարապետահատակագծային առաջադրանք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՀԱՍՏԱՏԱԿ
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N 01/18-01-1143-Ա «25» մարտի 2024թ

Օբյեկտ Թուրքի գլուխի խառնուրդ

«Աշխատանքային նախագիծ» ՀՀ կառավարության 19.03.2015թ. N 596-Ն որոշման N 4 հավելվածի

Գործադիր մարմնի ղեկավար՝ Ն. Ավետիսյան

Գործադիր մարմնի ղեկավարի տեղակալ՝ Ա. Ասատրյան

Գլխավոր ճարտարապետ՝ Ս. Ասատրյան

Ճարտարապետական հատակագծային առաջադրանքի հիմքում դրված է՝ Էրեբունի բարգավաճման ծրագիր

Կառուցապատող Էրեբունի համայնքի «Հայաստանի թուրքի ՀԿԿ-ի գլխավոր» 24

Առաջադրանքի գործողության ժամկետը Երեք տարի

ՆԱԽԱԳԾՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. Հողամասը գտնվում է՝ Հայաստանի Հանրապետություն՝ Երևան քաղաք, Աջափնյակ տարածաշրջան, Գրիգոր Լուսավորչի 1/1 հասցե

2.(*) Հողամասի չափերը 52845.58 քմ

3. Հողամասի ներկա վիճակը Կառուցապատումից ազատ տարածք

4.(*) Տնտեսագործառնական գոտիները Անհատական միջին գոտի

5.(*) Իրավունքային ցանցերը և սարքավորումները Նախագծիչը և ՀՊՀ տարածքներում գտնվող իրավունքային գծերի հարգանքներին

6.(*) Կից հողամասերը Հարակից հողամասերի և գրանցված շինությունների, Երկայնքի խմբագրումը

7.Ոռոգման հատուկ պահանջները և (կամ) պարտադիր չհամապատասխանության հուշագրերը (գրանցագրման գրությունը) Ենթակա չէ

8.(*) Հատակագծային սահմանափակումները Չկա

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ Մշակվել Անհատական միջին գոտու h.111/7 հասցեում թուրքի գլխուղի կառուցման աշխատանքա հանձնվել Էրեբունի բարգավաճման ծրագրի h. Ա. -Ա որոշմամբ տրամադրված հողամասի սահմանների մասով:

9.1. (*) Օբյեկտի հնարավորությունը կարմիր գծից դուրս (մետր) —

9.2. (*) Հնարավորություն հարևան հողամասերից (օբյեկտներից) (մետր) Ըստ հարևանների պահանջների

9.3. Թույլատրելի բարձրությունը (մետր) Դեղորայք հանձնաժողովի մշակած գծի հարթակի՝ հնարավոր է նիստերի «Հիանալի հարևան» հարկերում: Առավելագույն բարձրությունը բարձրացի ստորին հատակագծային նիշից հանձնաժողովի նիշից 16.0 մ

9.4. Կառուցապատման խտության գործակիցը Մինչև 100 %

9.5. Կառուցապատման տոկոսը Հարևանի հանձնարի

9.6. Կանաչապատման տոկոսը —

9.7. այլ պահանջներ
- Նախագիծը հնարավոր է հանձնաժողով թուրքի գլխուղի կառուցում, հնարավոր է մեկ հարկով կամ մասնակցելիորով
- Նախագիծը հնարավոր է հանձնաժողով գլխուղի գրանցումը դրեցող ծանրաբեռնվածությունը, հարկերի բարձրությունը, ինչպես նաև ամենաբարձր շինությունը:
- Նախագիծը ուսումնասիրվում է ՀՀՇՆ-30-01-2023թ. «Բնակելի և քաղաքային բնակավայրերի հատակագծում և կառուցապատման շինությունների նորմերը» և ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.10.2014թ. N 383-Ն հրամանի ուժի մեջ դրված մասնակցու մասին 22.08.2013թ. N 04-Ն հրամանով սահմանված (ընդունվ. XXVI «Հանձնաժողովների գործունեությունը») գործունեությունը:
- Նախագիծը հնարավոր է սանդղակավոր կամ վերակառուցման սահմանափակումների:

- Տանիքից ջրահեռացումը կազմակերպել՝ բացառելով անհրաժեշտության բացառումը հարևան հողատարածքներ:
- Հատակագծերի բոլոր մասերը մշակել հատակագծի պատվիրատուի առաջադրանքի հիման վրա՝ ամենայն հարմարավետ պահանջներով:

10. Հողամասում գտնվող շենքերի և շինությունների քանդման կամ տեղափոխման (ազատմասնատման) պայմանները և աշխատանքների ներբեռնումը —

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առանձին հարկերի տարածքների օգտագործման պայմանները —

12. (*) Իրավիճակային ցանցեր և սարքավորումներ — Պահանջներ գրություն ունենալու և հանձնվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ

12.1. (*) գրամատակարարում, կոյուղի, տաք գրամատակարարում — (հանձնարարական կառավարության տեղեկությունների պրոֆիլներ)

12.2. (*) էլեկտրամատակարարում — (հանձնարարական կառավարության տեղեկությունների պրոֆիլներ)

12.3. (*) գազամատակարարում — (հանձնարարական կառավարության տեղեկությունների պրոֆիլներ)

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխային կոյուղու (ներառյալ դիմահարը) տեղադիրքը — (Հանձնարարական 22 կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն, որոշման N 1 հավելվածի N 2 կետ 2 ոչ ենթակա սահմանված կարգավորման ազատելիներ)

12.5. բույլ հասանելիներ —

12.6. ազատահանություն —

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում Կարգավիճակը յուրահատուկ:

14. Բարեկարգում Տարածքը բարեկարգել և ֆունկցիոնալորեն, հնարավոր է պարտադիրաբար (ընտրանքային):

15. Շինարարական նյութեր Էրեբունիական, մնացած բարձ ռազմ, էրեբունիական բարձրագույն ազգ տեղ, էրեբունիներ:

16. Պարտադիրական կանաչներ Նախատեսել գրասենյակային իրավիճակներում պարտադիրաբար միջոցառումներ:

17. Հանգստեղեների պահանջներ Նախատեսել հանգստեղեների ներդրումներ պարտադիրաբար միջոցներ:

18. Հարմարանքների և ցանցերի տեղադրման ապահովագրած իրերի պաշտպանության միջոցառումներ Նախատեսել ծառայանքների և ՊՄԲ-երի վերակառուցման ապահովման ուղղությամբ միջոցառումներ՝ նախագծումը (տարբերությամբ և կանոնների բնությունը կատարելով ՀՀՇՆ IV-11.07.01-2006 (ՍՍՄ 3.02-05-2003) «Շենքերի և շինությունների մասնագիտությունը բնակչության տեղափոխման բնությունը կատարելով ՀՀՇՆ-ների պահանջների համաձայնությամբ:

19. Շրջակա միջավայրի պահպանում —

20. Շինարարության կազմակերպում Մշակել շինարարական աշխատանքների կազմակերպման նախագիծ՝ նկատի ունենալ ՀՀ կառավարության 12.04.2001թ. N 286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի «Բ» ենթակետի և 44.1 կետի պահանջները, ինչպես նաև Երևան քաղաքի ավագանու 16.03.2012թ. N 405-Ն որոշմամբ սահմանված լրացուցիչ պայմանները:

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագիծի մշակման փուլերը Երեք տարի

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննության ենթակա գրված պահանջներ ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 4 հավելվածի կանոնով սահմանված չափորոշիչներից ելնելով
- Պետական հանձնարարություն

23. Միջանկյալ հանձնաժողովներ Հանձնաժողովի Էրեբունի բարգավաճման հետ:

24. Հասարակական քննարկումներ —

25. Հանձնաժողովներ Էրեբունի բարգավաճման հետ:

26. Փուլային բաժանորդային պահանջների տեղադրում —

27. Այլ պայմաններ Նախագիծի կազմն և բովանդակությունը համապատասխանեցնել ՀՀ կառավարության որոշումներ բարգավաճման պետական կանոնների նախագծի 11.09.2017թ. «Բնակ. հատակագծման, պատգարների ընկերի և շինությունների նախագծի փաստաթղթ կազմն և բովանդակությունը սահմանող կանոնները և ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006թ. N 273-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 128-Ն հրամանով հաստատված դրույթներին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա.Ասատրյան

Ս.Տ.

S.Բարսեղյան

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված 3. Ջրամատակարարման և ջրահեռացման տեխնիկական պայման

VEOLIA

«Հաստատում եմ»
Ընտադրատեխնիկական բաժնի պետ՝
Գ.Վարդանյան
«16» 07 2025թ.

Տեխնիկական պայման ՎՋ 2857/2025

(Ջրամատակարարման և/կամ/ ջրահեռացման նախագծման)

Ք.Երևան, Դավթաշեն, Ա.Միկոյան փ. 111/7 հող. և Ք.Կոտայք, հ.Նաիրի, Ջրվոնի 41-բդ փ. 13	«Ջրաթ Դիվելոփմենթ ԱՊԿ Երևան Համայնք	055959585
Տարածքի հասցե՝	անուն, ազգանուն՝	հեռախոսահամար՝



476516

Հատակագիծ	Ջրամատակարարում	Ջրահեռացում	Հրդեհաշիջում	Հեղեղատար
Տոմոմեխանիզացիայի գոմվելու վայրը	Տարածքներից մուտ 500մ հեռավորությամբ	1.Երկաթյի խնայող 2.Տարածքներից ստիպ գնով մուտ 500մ հեռավորությամբ		Տարածքներից ուղիղ գնով մուտ 500մ հեռավորությամբ
Գործող խողովակի տրանսպորտը, մկրատը, տեսակը	d=300մմ, P=1.5 մթն. պող.	1.d=1200մմ 2.d=400մմ		d=400մմ
Միացման կետը	1. Տարածքներից մուտ 500մ հեռավորությամբ անցնող ջրագծից (համամակարգ) 2.Տարածքներից մուտ 500մ հեռավորությամբ անցնող ջրագծից (հիմնական)	1.Երկաթյի խնայողով անցնող կոյուղատարին 2.Տարածքներից ստիպ գնով մուտ 500մ հեռավորությամբ անցնող կոյուղատարին		Տարածքներից ուղիղ գնով մուտ 500մ հեռավորությամբ անցնող հեղեղատարին
Միացման տրամագիծը	Համաձայն նախագծի			
Ջրաչափի տրամագիծը				
Այլ պահանջներ	Ջրաչափական հանգույցների համար կառուցել դիտահորեր Տես ** կետը Տես *** կետը	Կոյուղագծի միացման կետում կառուցել դիտահոր	Տես * կետը	Հեղեղատարի միացման կետում կառուցել դիտահոր
Ջրամատակարարման գրաֆիկը	07.00-24.00			

Կատարման ստանդարտները կատարելու համար անհրաժեշտ է տվյալ գծագրում ներկայացված նախագծային գծանշումներին համապատասխանությունը ստուգելուց և գրանց հանձնելուց հետո «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի մոտ:

Կատարման աշխատանքների սահմանական հերթականությունը, դրանց հարկադրանքը, իրականացվում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն կամ ընկերության պատասխանատու կողմում հրապարակված ցանցում տեղադրված կանոնակարգերի՝ դրանցում հաշվի հանելով հատուկտակ նոր հանգույցի միացումը ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի իրականացումում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ՝ դրանցի հաշվին:

Սույն սահմանական պայմանը ուժի մեջ է 1 (մեկ) տարի՝ գրանցման օրվանից սկսած, այն նշված է հրդեհաշիջման դիմաց սահմանական պայմանի ժամկետի ավարտը՝ դիմումի լրացմամբ միջնորդագրի պնդումի հիման վրա:

Կատարման գծագրում, հողային աշխատանքների իրականացմանը, անհրաժեշտ է մեր ներկայացուցիչ, այլ իրավաբանորեն նշված շահագրգիռ մարմինների կամ անձանց բացակայությամբ

և/կամ հանձնաժողովների

* Հրդեհաշիջման ներքին ջրամատակարարման համար՝ ՀՀՇՆ 40.01.02-2020թ. և ՀՀ կառ. 08.08.2019թվականի 1025-Ն որոշման, թիվ 29 հավելվածի, կիրառման անհրաժեշտության դեպքում կատարվի վերանայում:

** Սույն սահմանական պայմանով վերանայված կոյուղագծերի կողմնացարդի առավելագույնը 3.9 լմ է գրաբանում, իսկ կառուցապատման համար անհրաժեշտ ենթադրյալ հատակագիծ գրաբանում կոյուղագծի d=200մմ արտաքին խողովակով՝ համաձայն ՀՄՍՇ թ. 23.01.2025թ-ի N ԿՈՒ343-Ն/4-2/135-2025 գրության:

***Քամնակում գրաբանվող կիրառվածքի ժամանակությունը d=20մմ գրաբանվող միացման կետում իրականացվում մեռ:

Հաշվի առնելով, որ ճ.կառաջ. հ.Նաիրի, Ջրվոնի 41-բդ փ.13 հասցեում կառուցվում է բազմաբնակարան շենք, իսկ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից ներկայիս ժամանակաշրջանում չկա մեկուսի 1.5մթն. Հ, սույն անհրաժեշտ է հավասարակշիռ ինժեներական արտաքին

Ինժեներական խմբի պատասխանատու՝ Ա.Հազարյան

Հավելված 4. Հանրային քննարկման արձանագրություն, մասնակիցների ցանկ և նկարներ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան **05.08.2025թ.**

2025թ. օգոստոսի 5-ին ժամը 11:00-ին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով (Օրենք), ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշման հավելվածով սահմանված կարգով, Երևան, Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի նստավայրում (հասցե՝ ք. Երևան, Դավթաշեն 3-րդ թաղ.), կայացավ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԿ-ի կողմից ներկայացված Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի Ա.Միկոյան փողոց հ. 111/7 հասցեում ֆուտբոլի դպրոցի կառուցման նախատեսվող գործունեության վերաբերյալ առաջին հանրային լսումը:

Ներկա էին Երևանի քաղաքապետարանի, Դավթաշեն վարչական շրջանի աշխատակազմի, նախաձեռնողի, նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակող ընկերության ներկայացուցիչները, Երևան համայնքի ավագանու անդամներ (Մասնակիցների ցանկը՝ ստորագրություններով և լուսանկարները կցվում են արձանագրությանը):

Ելույթ ունեցան՝

Հանրային քննարկումը բացեց Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ, համայնքի ղեկավարի կողմից հանրային լսման համար լիազորված անձ՝ Էլյադա Արամյանը: Ներկայացրեց հանրային լսման առարկան, նախատեսվող գործունեության վերաբերյալ հանրային քննարկման իրականացման կարգը՝ համաձայն կառավարության որոշման: Նշեց, որ հանրային քննարկման վերաբերյալ ծանուցումը կատարվել է Օրենքի և կառավարության որոշման պահանջներին համապատասխան և սահմանված ժամկետներում հանրային քննարկման վերաբերյալ հայտարարությունը հրապարակվել է «Առավոտ» թերթում, տեղադրվել է քաղաքապետարանի պաշտոնական կայքում: Նշեց նաև, որ շահագրգիռ հանրության կողմից գրավոր առաջարկություններ, դիտողություններ և կարծիքներ ծանուցումից հետո 20 աշխատանքային օրվա ընթացքում քաղաքապետարան չեն ներկայացվել: Այնուհետև խոսքը փոխանցեց նախաձեռնողի ներկայացուցչին:

Նախագծող՝ «Ստուդիո 23» ՍՊ ընկերության տնօրեն՝ Նարեկ Ռշտունին ներկայացրեց նախատեսվող գործունեության իրականացման ընթացքը, ճարտարապետա-հատակագծային լուծումները, նշեց, որ Ա մասնաշենքը երկհարկանի, 8x60մ հիմնային չափերով և 9,5մ բարձրությամբ շինություն է: Շենքի առաջին հարկում առկա է՝ 4 հասարակական և մեկ ադմինիստրատիվ տարածք: Երկրորդ հարկում առկա է՝ 1 պահեստ, 3 հանդերձանեցյակներ իրենց սանհանգույցով և ցնցուղարանով: Բ մասնաշենք՝ 91.8x88.2մ հիմնային չափերով և 18մ բարձրությամբ շինություն է: Փակ մարզադահլիճը նախատեսված է՝ 2000 հոգու համար: Մարզադահլիճի առաջին հարկում տեղադրված է հանդիսավոր մուտքային հատված, ինֆորմացիոն և ադմինիստրատիվ անկյուն, շրջանաձև ռեկրեացիոն գոտի և սրճարան, 4 տարհանման ելքեր, սանկանգույցներ, տեխնիկական սենյակներ, խաղադաշտ, 4 ծալովի տրիբունաներ, 4 հանդերձասենյակ և կից ցնցուղարան, սանհանգույց, մերսման սենյակ և շոգեբաղնիք: Երկրորդ հարկում տեղադրված է՝ 2 վիպ տրիբունաներ, ադմինիստրարիվ և տեխնիկական սենքեր, սանհանգույցներ և աստիճանավանդակ: Երրորդ հարկում՝ 4 տրիբունա, սանհանգույցներ, աստիճանավանդակ: Գ մասնաշենք՝ 36.5x106մ հիմնային չափերով և 16մ բարձրությամբ շինություն է: Բաց տրիբունան նախատեսված է 4000 հոգու համար: Տրիբունայի աջ և ձախ մասում տեղադրված է խաղադաշտ 70x105մ: Առաջին հարկում մուտքային հատված, ադմինիստրատիվ և տեխնիկական սենքեր, սանհանգույցներ, հանդերձարաններ, աստիճանավանդակ և տարհանման ելքեր: Երկրորդ հարկում՝ տեխնիկական սենյակներ, սանհանգույցներ և աստիճանավանդակ: Երրորդ հարկում՝ փակ վիպ տրիբունաներ, սանհանգույցներ և աստիճանավանդակ: Դ մասնաշենք՝ 15x30մ հիմնային չափերով և 9մ բարձրությամբ շինություն է: Ուսումնական հաստատության առաջին հարկում առկա է՝ 4 դասասենյակ, 1 ուսուցչանոց կից սանհանգույցով, 2 սանհանգույց և աստիճանավանդակ: Երկրորդ հարկում 7 դասասենյակ, 2 սանհանգույց, աստիճանավանդակ և տարհանման աստիճանավանդակ: Ե մասնաշենք՝ 5x12մ հիմնային չափերով և 5մ բարձրությամբ շինություն է: Շինությունը բաղկացած է երեք մասից՝ պոմպակայանան, էլեկտրական ենթակայան, կաթսայատուն:

Ավագանու անդամ Արմեն Քոչարյանը հարց բարձրացրեց տեղադիրքի վերաբերյալ:

Նարեկ Ռշտունին ներկայացրեց նախատեսվող ֆուտբոլի դպրոցի տարածքը, նկարագրեց տեղադիրքը:

Արմեն Քոչարյանի հարցին Նարեկ Ռշտունին պատասխանեց, որ մուտքը նախատեսված է Տիգրան Պետրոսյան փողոցից դեպի Միկոյան փողոց, որից անմիջապես մտնում են ներքին տարածք, որը սահմանազատված է, որտեղ էլ գտնվելու է ոռջ կառույցը: 2-րդ ճանապարհը նախատեսված է Զովունիի կողմից:

Դավթաշեն վարչական շրջանի ղեկավար Ալբերտ Հովսեփյանի հարցին Նարեկ Ռշտունին պատասխանեց, որ 2-րդ ճանապարհը կա, գործում է:

Արմեն Քոչարյանի հարցին Նարեկ Ռշտունին պատասխանեց, որ հողը համայնքային է:

Դավթաշեն վարչական շրջանի աշխատակազմի ներկայացուցիչ Սուրեն Սաֆարյանը ավելացրեց, որ հողը ի սկզբանե ԱԻՆ-ի բալանսում էր, որը կառավարության որոշմամբ հատկացվեց համայնքին, իսկ հետո համայնքի կողմից անհատույց հատկացվեց ֆուտբոլի դպրոց կառուցելու համար:

Արմեն Քոչարյանի հարցին Նարեկ Ռշտունին պատասխանեց, որ հողը 5.2 հա է:

Այնուհետև ծավալվեցին քննարկումներ հողի կարգավիճակի, տարածքին կից սեփական շենքի ճանապարհի վերաբերյալ:

Նարեկ Ռշտունին պարզաբանեց, որ նշված շենքը իր մուտքի ճանապարհ նախատեսել է իրենց հատկացված համայնքային հողով, առանց համաձայնեցնելու համայնքի հետ, այդ հարցը հետագայում կկարգավորվի, դա հաշվի առնելով նախագծման փուլում այդ հատվածում շինություն չի նախագծվել, ազատ տարածք է թողնվել, հետագայում հնարավորություն լինի ճանապարհ հատկացնել այդ շենքին:

Արմեն Քոչարյանի հարցին Նարեկ Ռշտունին պատասխանեց, որ ֆուտբոլի դպրոցի համար տարածքում նախատեսված է 300 ավտոկայանատեղի: Միջոցառումների ժամանակ հնարավոր է մուտքի ճանապարհները կարգավորել, չթողնել մեքենաները բարձրանան մինչև տարածք, ոտքով մոտենան տարածքին:

Այնուհետև ծավալվեցին քննարկումներ միջոցառումների ժամանակ տարածքի ճանապարհների ծանրաբեռնվածությանը, ավտոկայանատեղերի քանակի քչությանը վերաբերող հարցերի շուրջ:

Նարեկ Ռշտունին նշեց, որ նշված հողի շրջանակներում այլ բան հնարավոր չէ, ունեն սուղ բյուջե, ստորգետնյա հարկեր նախատեսել չեն կարող:

Արմեն Քոչարյանը նշեց, որ միակ մտահոգությունը ավտոկայանատեղին է, միջոցառումների ժամանակ ծանրաբեռնվելու է ճանապարհը, ավտոկայանատեղիների պակասի պատճառով խցանումներ կառաջանան:

Հարց բարձրացվեց տեխնիկական պայմանների վերաբերյալ:

Նարեկ Ռշտունին պատասխանեց, որ հոսանքի խնդիր չեն ունենա, դիմել են ՀԷՑ, քննարկման փուլում է, շուտով կտան պայմանները: Կոյուղին, հեղեղատարը միանում է Գարունավանի հատվածում, խնդիրներ չունեն: Գազաֆիկացման տեխպայմաններ ստանալու համար դիմել են, քննարկման փուլում է:

Արմեն Քոչարյանի հարցերին Նարեկ Ռշտունին պատասխանեց, որ բաց տրիբունայի հատվածը բետոնե կառույց է, այն հնարավոր է վերապրոֆիլավորել որպես ապաստարան, իր բոլոր հարմարություններով: Այդ տարածքում միայն հոսանք կա: ԱԻՆ-ին ներկայացվել է նախագիծը, եզրակացություն դեռ չեն ստացել: Ջրերի ռեզերվուարներ նախատեսված են:

Է.Արամյանի հարցին Նարեկ Ռշտունին պատասխանեց, որ տարածքում ազատ մնացած հատվածները կանաչապատելու են: Բուսատեսակների ընտրության ժամանակ կհամաձայնեցնեն քաղաքապետարանի հետ: Կոնկրետ մակերեսով ասել թե ինչքան հատված է կանաչապատվելու, դժվար է ասել, քանի որ դա կախված է կառույցի բնույթից, մարզադաշտերի տեսանելիությունը ապահովելուց:

Այնուհետև ծավալվեցին քննարկումներ բարձրացված հարցերի շուրջ:

Է.Արամյանը նշեց, որ կանաչապատման նախագիծը անհրաժեշտ է կազմել ՀՀ կառավարության 08.02.2018թ. N108-Ն որոշման համապատասխան և ներկայացնել քաղաքապետարանի համաձայնեցմանը:

Քնարիկ Գրիգորյանը պատասխանեց, որ նախագծման թույլտվությամբ կանաչապատման տոկոսային պահանջ չկա, սակայն կանաչապատման նախագիծ կազմելիս բոլոր պահանջները հաշվի կառնվեն:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակող ընկերության ներկայացուցիչ Քնարիկ Գրիգորյանը ներկայացրեց, որ կազմակերպությունը մշակելու է ՇՄԱԳ հաշվետվությունը, որում կներառվի բոլոր այն միջոցառումները, որոնք շինարարության փուլում կիրառելով հնարավոր կլինի մեղմել և նվազագույնի հասցնել հնարավոր ազդեցությունները: Միջոցառումները կներկայացնեն նախնական գնահատման հայտում, կնախատեսվի բնապահպանական կառավարման պլան, նաև մոնիթորինգ:

Է. Արամյանն ավելացրեց, որ շինարարության կազմակերպման ընթացքում անհրաժեշտ է պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջները, ինչպես նաև Երևան քաղաքի ավագանու 16.03.2012թ. «Քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերով սահմանված նորմերի Երևանում իրականացման լրացուցիչ պայմանների կարգը սահմանելու մասին» 405-Ն որոշմամբ սահմանված պահանջները:

Է. Արամյանը եզրափակեց հանրային լսումը, նշելով, որ հանրային լսումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում կկազմվի հանրային լսման արձանագրությունը, իսկ 5 աշխատանքային օրվա ընթացքում հանրային լսման արձանագրությունը, տեսաձայնագրությունը կներկայացվի համայնքի ավագանուն և նախաձեռնողին:

Վարող՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի
բնապահպանության վարչության
գլխավոր մասնագետ՝ Է. Արամյան

Նախաձեռնող՝
Հերիկ Գրիգորյան
Հ. Ռշտունի

Հաերային լսման մասնակիցների
ՑԱՆԿ

անուն, ազգանուն	պաշտոն	հեռախոս	ստորագրություն
[illegible]	[illegible]		
[illegible]	[illegible]		
[illegible]	[illegible]		
[illegible]	[illegible]		
[illegible]	[illegible]		
[illegible]	[illegible]	094945445	
[illegible]	«[illegible]» [illegible]	041230023	
[illegible]	«[illegible]» [illegible]	093492141	
[illegible]	[illegible]	077203857	



Հավելված 5. Ավագանու՝ գործունեությանը նախնական համաձայնություն տալու մասին որոշման պատճեն

Երևան քաղաքի ավագանու որոշում

11.09.2025

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

09 սեպտեմբերի 2025թ. N 396-Ա

ՈՐՈՇՈՒՄ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԴԱՎԹԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԱՆԱՍՏԱՍ ՄԻԿՈՅԱՆ ՓՈՂՈՑ Հ. 111/7 ՀԱՍՑԵՈՒՄ ՖՈՒՏԲՈԼԻ ԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 11-րդ, 16-րդ հոդվածները և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի հ.1325-Ն որոշման հավելվածի 28-րդ կետը՝
Երևան քաղաքի ավագանին որոշում է.
1. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության կողմից ներկայացված՝ Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի Անաստաս Միկոյան փողոց հ.111/7 հասցեում ֆուտբոլի դպրոցի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:
2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 09
Երևան

[3]

[3] https://www.yerevan.am/hy/elders-decisions/396-a-2/

Հավելված 6. Իրադրային հատակագիծ


Gagat
Բնակելի հասարակ
Duble Towers
Բնակելի հասարակ
Ս.Ա.
Ս.Ա.
Ս.Ա.

Հավելված 7. Շինարարական աշխատանքների ժամանակացույցը

N	Աշխատանքի անվանումը	Տևողություն		1-ին եռամսյակ			2-րդ եռամսյակ			3-րդ եռամսյակ			4-րդ եռամսյակ			1-ին եռամսյակ			2-րդ եռամսյակ			3-րդ եռամսյակ			4-րդ եռամսյակ		
				1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24
	ԸՆԴԱՐՄՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ	730 օր	24 Ամիս																								
1	ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ Շինհրապարակի ցանկապատում, մաքրում, ժամանակավոր ճեղակառուցվածքներ	30 օր	1 Ամիս																								
2	ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ Փոսորակում, լանջային փոսեր, հիմքի համար հողային նախապատրաստում	30 օր	1 Ամիս																								
3	ՀԻՄՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ Բ հիմքեր (մարզադահտ), Գ տրիբունա, Ա, Դ, Ե մասնաշենքերի հիմքեր	60 օր	2 Ամիս																								
4	ԿԱՐԿԱՍՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ Բետոնային կամ մետաղական կարկաս՝ ըստ շենքի հատակագծի, հիմնական կոնստրուկցիաներ	180 օր	6 Ամիս																								
5	ՏԱՆԻՔ, ՊԱՏԵՐ Տանիքի կառուցում, արտաքին պատերի ձևավորում, ջերմամեկուսացում	60 օր	2 Ամիս																								
6	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ Էլեկտրամատակարարում, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու համակարգեր	90 օր	3 Ամիս																								
7	ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՈՒՄՆԵՐ Սվաղում, գաջում, հատակներ, ներքին դռներ, սանհանգույցներ, ներկում	90 օր	3 Ամիս																								
8	ԱՐՏԱՔԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ Ճուտքոլի, բասկետբոլի, մինի դաշտեր, կայանատեղիներ, սալահատակներ	60 օր	2 Ամիս																								
9	ԿԱՀԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ ահույք, մարզական նստարաններ, էլեկտրոնիկա, անվտանգության համակարգեր	60 օր	2 Ամիս																								
10	ՄԱՔՐՈՒՄՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ Վերջնական հանձնումից առաջ մաքրում, թեստավորում, նշագծում	30 օր	1 Ամիս																								
11	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆՈՒՄ ՓՈՒԼ Աշխատանքների վերջնական հանձնման ակտ, ընդունում, շահագործման թույլտվություն	30 օր	1 Ամիս																								

Հավելված 8. Հանրային քննարկման թերթի հայտարարությունը



Քաղաք

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8 Yerevan, Republic of Armenia, 2 Arbakunieks, 15 floor, tel. 060 27 46 02, fax. 060 27 46 01, news@arevut.am

Հավելված 9. Շինարարական աշխատանքների կազմակերպման հատակագիծ



Հավելված 10. Բարեկարգման և կանաչապատման հատակագիծ



Հավելված 11. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» ՀԿ վերաբերյալ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանից քաղվացք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

Էլեկտրոնային քաղվածք: Բեռնվել է՝ 2025-03-11-ին, www.e-register.am կայքից:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ»

Հասարակական կազմակերպություն

Գրանցման համար	211.171.1039517
Հիմնադրման տարի	2018
Գրանցման ամսաթիվ	2018-10-02
Գործունեության ժամկետ	Անժամկետ
Ստեղծման եղանակ	Հիմնադիրների որոշում
Կարգավիճակ	Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվող կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:
Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԳ)	39072211
Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)	02566915
Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովագրի ծածկագիր)	179517
Էլ. փոստ	ffa@ffa.am
Կայք	www.ffa.am

Գտնվելու վայրը

Հասցե	ԽԱՆԶԱՅԱՆ Փ. / Շ / 27 ԿԵՆՏՐՈՆ 0010 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ
Հեռախոս	+374 10 305050

Գործադիր մարմնի ղեկավար

Անուն Ազգանուն	ԱՐՄԵՆ ՄԵԼԻՔԲԵԿՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐԻ
Անձնագրային տվյալներ	010329845 2018-10-04 010
Հասցե	ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ. / Շ / 47 / ԲՆ.96 ԿԵՆՏՐՈՆ 0018 ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ
Էլ. փոստ	-

Տեղեկություններ իրավահաջորդության / իրավանախորդության վերաբերյալ

Իրավահաջորդ(ներ)	գրառված չեն
Իրավանախորդ(ներ)	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻԱՄ (211.150.01601)

Պետական միասնական գրանցամատյանում կատարված փոփոխություններ

Գրանցման ամսաթիվ	Փոփոխություններ
2019-11-11	Կանոնադրության փոփոխություն (նոր խմբագրությամբ կանոնադրություն)
2019-12-26	Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն
2021-07-30	Կանոնադրության փոփոխություն (նոր խմբագրությամբ կանոնադրություն)
2022-07-28	Կանոնադրության փոփոխություն (նոր խմբագրությամբ կանոնադրություն)
2023-03-06	Իրական սեփականատերերի վերաբերյալ նոր խմբագրությամբ հայտարարագրի ընդունում
2024-02-19	Իրական սեփականատերերի վերաբերյալ նոր խմբագրությամբ հայտարարագրի ընդունում

Հավելված 12. Հողային աշխատանքների ժամանակ փոշու արտանետումների հաշվարկ

Հողային աշխատանքների ժամանակ առաջանում են փոշու արտանետումներ: Դրանք առաջանում են փորման-բեռնման աշխատանքների արդյունքում: Հողային աշխատանքների իրականացման տևողությունը 30 օր է:

30 օր x 8 ժամ/օր = 240 ժամ:

Հաշվարկները կատարված են համաձայն "ВРЕМЕННОЕ МЕТОДИЧЕСКОЕ ПОСОБИЕ ПО РАСЧЕТУ ВЫБРОСОВ ОТ НЕОРГАНИЗОВАННЫХ ИСТОЧНИКОВ В ПРОМЫШЛЕННОСТИ СТРОИТЕЛЬНЫХ МАТЕРИАЛОВ", Минпромстрой СССР, 1987

մեթոդակարգի հետևյալ բանաձևի.

Q Փ.Բ.= (P1 x P2 x P3 x P4 x P5 x G x P6 x B) x 106/3600 տ/ժամ, որտեղ (նշված մեթոդակարգի աղյուսակ 1):

P1 – փոշու ֆրակցիայի բաժնեմասն է, ընդունվում է 0.05

P2 – 0-50 մ/կմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու աերոզոլում,

0.02

P3 - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի

գոտում քամու արագությունը, 1.0,

P4- գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 0.41

P5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 0.5

P6 - գործակից, որը հաշվի է առնում տեղանքի պայմանները, 1.0

G – հանվող հողային զանգվածը:

Շինարարության ժամանակ հանվող հողի ծավալը կկազմի՝ 13272,33խմ, հաշվի առնելով հողային զանգվածների միջին տեսակարար կշիռը՝ / 21914,34 տ:

Ժամում հանվող տեղափոխվող գրունտի քանակը կկազմի՝ 21914,34տ: 240 շին. ժամ = 91,31 տ/ժամ:

B - գործակից, որը հաշվի է առնում նյութի թափման բարձրությունը, 0.6

$Q = (0.05 \times 0.02 \times 1.0 \times 0.41 \times 0.5 \times 91.31 \times 1.0 \times 0.6) \times 10^6 / 3600 = 3.12$ գ/վրկ:

$Q \times 3600 \times 240 / 10^6 = 3.12 \times 864000 / 10^6 = 2.70$ տոննա (ընդհանուր փոշու արտանետում):

Հավելված 13. Շահագործվող տեխնիկայի արտանետումների հաշվարկ

Տվյալ բաժնում ներկայացվում է շինարարական աշխատանքներում ներգրավվող տեխնիկայի՝ ներքին այրման շարժիչներից եկող արտանետումների և շինհրապարակում առաջացող անկազմակերպ փոշու քանակի հաշվարկը։ Տվյալները կատարվել են՝ ելնելով ներկայացված ժամանակացույցից, տեխնիկայի իրական քանակից և Մինպրոմստրոյ (1987) մեթոդական ցուցումների համապատասխան բանաձևերից։

Շինարարական հարթակում շահագործվելու են հետևյալ հիմնական տեխնիկական միջոցները՝

№	Տեխնիկա	Քանակ	Միջին աշխատանքային ժամ/օր	Ընդհանուր աշխատանքային տևողություն (օր
1	Էքսկավատոր	1	8 ժ	30 օր
2	Բուլդոզեր	1	6 ժ	25 օր
3	Բեռնատար մեքենաներ	2	8 ժ	30 օր
4	Բետոնախառնիչ	1	6 ժ	20 օր
5	Ավտոծխահանքային/կռունկ	1	6 ժ	15 օր

Շահագործման ժամանակահատվածը = 30 օր

Միջին օրական աշխատաժամ = 8 ժամ

Ընդհանուր շահագործման տևողությունը՝ 240 ժամ

Յուրաքանչյուր աղտոտիչի համար հաշվարկվում են երեք հիմնական ցուցանիշներ՝

1. Տեսակարար արտանետում (S, գ/կգ) – արտանետվող նյութի քանակը 1 լ վառելիքի այրման ժամանակ։

2. Արտանետման արագություն (E, գ/վրկ) – շարժիչի աշխատանքի ընթացքում յուրաքանչյուր վայրկյանում արտանետվող քանակը։

3. Ընդհանուր արտանետում (T, տոննա/2080 ժ) – տարեկան հաշվարկային արտանետում։

Վառելիքի այրման արագությունն (M) հաշվարկվում է՝

$$M = \frac{E}{S} \ (\square\square/\square)$$

Տեխնիայի արտանետումների հաշվարկ (CO, CH, NO_2, PM)

CO — Ածխածնի մոնօքսիդ

S = 36.4 գ/կգ

E = 4.2 գ/վրկ

$$M = \frac{4{,}2}{36{,}4} = 0.115 \ (\square\square/\square)$$

CH — Ածխաջրածիններ

S = 0.243 գ/կգ

E = 0.028 գ/վրկ

$$M = \frac{0.028}{0.243} = 0.115 \ (\square\square/\square)$$

NO_2 — Ազոտի երկօքսիդ

S = 42.3 գ/կգ

E = 0.11 գ/վրկ

$$M = \frac{0.11}{42.3} = 0.0026\ (\square\square/\square)$$

PM — Պինդ մասնիկներ

S = 4.3 գ/կգ

E = 0.5 գ/վրկ

$$M = \frac{0.5}{4.3} = 0.116\ (\square\square/\square)$$

Ընդհանուր արտանետումների հաշվարկ 2080 ժամ աշխատաժամի համար**

2080 ժամ = 7 488 000 վայրկյան

T = M * 7,488,000 (գ) = T / 10^6 տոննա

T (CO)=0.115* 7,488,000=861,120 գ=0.861 տ

T (CH) =0.115* 7,488,000=861,120 գ=0.861 տ

T (NO_2)=0.0026 * 7,488,000=19,468.8 գ =0.019 տ

T (PM) =0.116 * 7,488,000=868,608 գ =0.869 տ

Հավելված 14. Հողատարածքի կոորդինատները

8457630.4649	4455084.9350	E 44°30'4.05"	N 40°13'42.2652
8457530.1729	4455080.4174	E 44°30'9.4212	N 40°13'42.4416
8457685.7763	4455194.7938	E 44°30'11.6784	N 40°13'45.3036
8457757.8223	4454979.6974	E 44°30'13.4928	N 40°13'38.4924